

ՔԱՆԱԲԵՐ

Հոգեւոր Աստուծոյ Աստուծոյ ՀԱՄԱՐ
"PANPÈRE" REVUE MENSUELLE RELIGIEUSE ARMÉNIENNE

Journal des Eglises Evangéliques Arméniennes de France

7, Rue Papère, MARSEILLE

(Ժ. Տարի) ՅՈՒԼԻՍ 1934

(10^{me} Année) Juillet 1934

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրական

Մխիթարութիւնը

Հոգ. Կեանք

«Ինձի ալ երեւցաւ»

Եղբայրական փոխադարձ յարաբերութիւն

Մահուն անկողինին մէջ փրկուած

Ի յիշատակ . . .

Կեանք ածունեւրէն

Հաղորդ միայն

Ս. Գիրքը նպարավաճառի փաթեթելու թուղթ

Ս. Գրական ուսումնասիրութիւն

Երգ Երգոց

Ջատագլուական

Օքսֆորտի Խմբական Շարժումը

Իրանկանց սիւնակ

Եթէ սէր չունիս

Ուղիղ հետքեր

Չուն եւ կրակ

Ջանազան լուրեր

Յ. Ն. Ղ.

Թարգ. Տ. Գարամանուկեան

X

Վահան Ստամպուլեան

Բրոֆ. Ս. Յ. Պուճիգանեան

Ա. Օ. Փափազեան

Վեր. Ա. Ղ. Եղոյեան

Սամուէլ Պ.

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսածերերը թէեւ ֆրանսահայ Աւետարանա-
կան եկեղեցիներու պաշտօնաւորներն է, այսու ամենայնիւ,
նպատակ ունի ծառայելու ամենուն, որոնք Տշմարտութիւնը
կը փնտռեն եւ ծարար կըզգան Աստուծոյ խօսքին սննդարդաւի
վկայութեան: Քանի որ Քրիստոս չեկաւ միայն կարգ մը
անհատներու համար, այլ ամենուն, բւտի Տշմարտութեան Բանքին
ներկայացուցիչն ալ չճանչնար ո եւ է յարանուանութիւն մը,
հապա մէկ է անոնց հետ, որոնք Քրիստոսի մէջ իրեն կը
միանան: ԲԱՆԲԵՐ կ'ուզէ ծառայել անոնց:

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսածերերը երկու լիզուներով կը հրատարակուի Հայերէն եւ Թուրքերէն: Երկուքն ալ
կը տպուին Մարտէլի մէջ: Հայերէնը ունի 16 էջ (կողքէն դուրս), որուն խմբագրական մարմինն է,
Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ, Բրօֆ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ, Պատք. Ս. ՊԱԳԳԱԼԵԱՆ, Վ. ՍԱՀԱԿԵԱՆ
Թուրքերէնը ունի 8 էջ ո'չ թէ հայերէնին Թարգմանութիւնը այլ տարրեր բովանդակութեամբ: Այս պարագան
գիւրութիւն կուտայ որ Թուրքերէն գիտցող մը անկէ ալ կընայ օգտուիլ: Թուրքերէն մասի պատասխա-
նատու խմբագիրն է՝

ԺՕԶԷՖ Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

18, Rue du Docteur Rebatel — LYON (France)

որու ղրկուելու են նաեւ բոլոր Թուրքերէն յօդուածները:

ԲԱՆԲԵՐԻ համար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք
գիտեն վերստին ծնունդն ու հոգեւոր կեանքը եւ անոր մէջ
ապրելու ամենօրեայ ուրախութիւնը կը վայելն Քրիստոսով:

|||||

ԲԱՆԲԵՐԻ բաժանորդագրութիւնը տարեկան է կանխիկ

— ԲԱԺԵՆԴԻՆՆ Է —

ՀԱՅԵՐԷՆԸ Ֆրանսա եւ Սուրիա 15 Ֆրանք
Արտասահման 20 Ֆրանք

ԹՈՒՐԿԵՐԷՆԸ Ֆրանսա եւ Սուրիա 7 Ֆրանք
Արտասահման 10 Ֆրանք

ՀԱՅԵՐԷՆ եւ ԹՈՒՐԿԵՐԷՆ միասին Ֆրանսա եւ
Սուրիա 20 Ֆրանք եւ Արտասահման 27 Ֆրանք

Թղթակցութիւններ եւ յօդուածներ ղրկուելու են
Պատ. ՎԱՀԱՆ ՍԱՀԱԿԵԱՆԻ խիղճը դրամական առա-
քումներ Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆԻ անունով, էլ-
կուքն ալ հետեւեալ հասցէով.—

Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN
7, Rue Papère
MARSEILLE (France)

Ֆրանսայէ գրամական աւտօքլիմերու համար մեր Compte Chèque Postalն է H. N. Ghazarossian, 182, 53 Marseille

Le Gérant: M. le PASTEUR KALTENBACH

Արթնցի՛ր դուն
որ կը քնանաս, եւ
կանգնէ մեռելնե-
րէն, ու Քրիստոս
քեզի լոյս պիտի
տայ:
Եփես. Ե. 14

Քանզի ալ աս-
կէ քիչ մը ասենէն
Ան որ գալու է՝
պիտի գայ ու պի-
տի ջուշանայ:

Ուրեմն ա՛լ վախճանք, որ չըլլայ թէ
Անոր հանգիստը մանկու խոստմունքէն որ մեզի մնացեր է,
ձեզմէ մէկը զրկուած գտնուի: Երբ. Գ. 1

Երբ. Ժ. 37

Ժ. ՏԱՐԻ

ՅՈՒԼԻՍ 1954

ԹԻԻ 7

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՄԻՍԻՈՆԱՐՈՒԹԻՒՆԸ

(Ազատ խորհրդածութիւններ)

Գ.

Ինչպէ՞ս պիտի լսեն առանց մէկուս քարոզելուն:
Հետվմ. Ժ. 14

Այս թիւով մասնաւորելով մեր նիւթը ազգա-
յին իրականութեան մէջ, հարկ պիտի ըլլայ մե-
զի շօշափել փափուկ հարցեր, եւ հակառակ առ-
նըւած նախադուշութիւններու, հաւանաբար զոր-
ծածուին բառեր, որոնք Հիւրնան լման ներկայաց-
նել իրենց ետեւը գտնուած խորհուրդը, կամ սը-
պրդին արտայայտութիւններ, որոնք սխալ հաս-
կըցւելով քաշքշուքներու տեղի տան: Մեր ջան-
քը պիտի ըլլայ -- մէն փափկանկատութիւնով
մէկտեղ, նաեւ ճշմարտութիւնը ներկայացնել:

Ձեռք նոր ընթերցանքներ փնտռող եւ անոնցմէ տար-
ուող Հերովդէսեաններ, բայց չենք ալ կրնար ա-
ւանդութեանց պատճառաւ Աստուծոյ պատուի-
րանքը զանց ընել (Մատթ. ԺԵ. 3): Ուրեմն ա-
նաչառ հոգիով մը կ'ուզենք մօտենալ քննելու
հարցը թէ արդեօք մեր ազգին մէջ հարկ կ'ա՞ր
միսիոնարութեան:

Այս հարցին առթիւ անմիջապէս եւ բնականօ-
րէն շատերու մտքին մէջ պիտի ցցուին կարգ մը
ապիկար միսիոնարներ, անոնց ապիկար գործու-
նէութիւնն ու այդ գործունէութեանց արգահատե-
լի հետեւանքը: Բայց նկատի առնենք թէ ապի-
կարն ու ապիկարութիւնը Հափանիշ չեն գործի
մը մէջ, այլ անոր ուղղութիւնն ու շարժիչ հոգին:

Հայ իրականութեան մէջ միսիոնարութիւնը
մօտ գտած է հարիւր տարիներէ ի վեր եւ ու-
նեցած է մեծ ծառայութիւն քաղաքակրթական,
կրթական, վերածնական տեսակէտով: Հակառակ
անոր ունեցած շատ մը սխալներուն, անոր օգ-
տակարութեան սակը անուրանալիօրէն բարձր

եղած է: Մեր թերթին նեղ սիւնակները չեն նե-
րեր թուելու զանոնք, բաց աստի դուրս պիտի
ելլէինք մեր թերթի ուղղութենէն՝ որ միայն հո-
գեւոր կեանք մշակելու նպատակ ունի: Կ'ու-
զենք որ ընթերցողը մտքի ունենայ թէ անցեա-
լին Հայութեան մէջ գործող միսիոնարութեան
որպէս ջատագով չենք կայնիր, ո՛չ ալ ամէն
միսիոնարական գործունէութիւն կը նկատենք
իբր իտեալ գործունէութիւն մը, բայց չենք ու-
զեր անտեսել անցեալին՝ միսիոնարութեան
մեր մէջ ունեցած բարեբար ազդեցութիւնը հո-
գեւոր մարզին մէջ:

Միսիոնարութեան Հայ Ժողովուրդին մէջ գոր-
ծունէութեան սկսած պահուն, Առաքելական ե-
կեղեցիին պատկերը հետեւեալ կերպով կարելի
է ներկայացնել:

Հայ առաքելական եկեղեցին իր փառաւոր
դիրքը դարերէ ի վեր պահելով, Հայ ազգին
պահպանութեան համար որպէս լուսաւոր հրեշ-
տակ մը մայրական զուրգուրանք ցոյց տուած է
հանդէպ իր զաւակներուն, բայց այդ հոգեւոր
զգացումները քաղաքական աննպաստ պարագա-
ներու բերմամբ հետզհետէ ազգայնական բնոյթ
առած են եւ դարէ մը ի վեր եկեղեցին կը նը-
կատուի ազգային կեանքի եւ ազգային գրակա-
նութեան եւ կուլտուրային աւանդապահը. այ-
սօր նոյնիսկ բարձր կրթութեան տէր մարդիկ
կը սիրեն լսել «Հայ ազգային եկեղեցի» անու-
նը, քան «Հայ առաքելական եկեղեցի», որ անց
եալին մէջ պանծալի մակդիրն եղած է Հայոց
եկեղեցիին, ցոյց տալով անոր դարաւոր հաւատ-
քի յստակ ուղղութիւնը: Բարձր դասու եկեղե-
ցականութիւնն ալ գրեթէ նոյն կերպով կ'արտա-
յայտուի իր քարոզներովն ու յօդուածներովը

պաշտօնական կրօնական պարբերաթերթերուն մէջ: Եկեղեցին ու եկեղեցականը այսպէս կորսնցուցին իրենց ներքին ոյժը եւ բաւականացան արտաքին ծիսակատարութեամբ մը, որմէ հոգեւոր կեանքի ծնունդ եւ սնունդ ենթադրել կարելի չէ: Արդար ըլլալու համար պէտք է ըսել թէ մեր ազգը դարերէ ի վեր աշխարհի ամենէն բարեպաշտ ազգերէն մին եղած և իր եկեղեցիին ու հաւատքին համար ալ անհամար մարտիրոսներ տուած է, բայց նախկին սէրը չկայ հոն. պէտք է խոստովանիլ թէ այդ կրօնական զգացումը, որքան այն ազնիւ ու բարձր եղած է, այսու ամենայնիւ չէ կրցած թափանցել մեծամասնութեան խաւերէն ներս, ու հաւատքի կեանքը եղած է խիստ ծանծաղ և զգացական. յաւէտ մղտքի կրաւորական ըմբռնում մը, քան սրտի կենդանի յարաբերութեան մը ստիպողական եւ անհրաժեշտ պէտքը Քրիստոսի հետ: Հայ քահանան ալ երկաթ ատենէ ի վեր իր պաշտօնին մտած է, առանց անոր համապատասխան դաստիարակութիւն ստացած եւ հովուական բազմապիսի կոչման ներքնապէս պատրաստուած՝ նոյն իսկ գիտակից ըլլալու: Այսպիսի պարագայի մը տակ բնականաբար շատ քիչ կ'ակնկալուի Ս. Գրական հաւատք եւ վերստին ծննդեան անհրաժեշտութիւն. անոնց ընտրութեան առթիւ բաւ սեպուած է միայն պատարագներու եւ կարգ մը արարողութեանց զոց գիտնալը: Կարելի չէ նաեւ ենթադրել հոգեւոր կեանք, սրբութիւն, յաղթական կեանք, աճուն, բեղմնաւոր եւ միսիոնարական ոյժ մը: Գտնուած է միշտ եւ կը գտնուէր նաեւ պզտիկ խումբ մը, որ ծառաւի էր հոգեւոր բաներու եւ լի ճշմարտութիւնը հասկընալու կարօտով: Արդ, մէկ կողմէն անտարբեր ու բարձրագոյն նպատակէն շեղած զանգուած մը, միւս կողմէն ետ, դէպի ճշմարտութիւն ու փրկութեան Աւետարանը դառնալու մեծ տենչով լի փոքրամասնութիւն մը: Այս պատկերին առջեւ զլտաւ ինքզինքը Պոլիս հասնող միսիոնարը, որ բնականաբար անտարբեր չէր կրնար մնալ ծառաներուն ու անօթիներուն ցոյց տալու Քրիստոսը, որպէս կեանքի հացն ու ջուրը:

Հաւատքի տէր միսիոնարներ, Աստուածաշունչի ընկերութեան միջոցաւ Ս. Գիրքի թարգմանութեան ու հրատարակման գործի յաջողութիւնով հոգեւոր վերածնունդի մը զուտ բացին բոլոր երկրին մէջ: Այս մօտ յարաբերութեամբ եւ հոգեւորներու միսիոնարաց հետ շփմամբ ու մայր եկեղեցւոյ կողմէ հալածուելովը երեւան եկաւ Աւետ. եկեղեցին, որ մայր եկեղեցւոյ ներքին ու

մտաւոր զարգացման ուղղակի եւ անուղղակի կերպով մեծ զարկ մը տուաւ: Երանի՜ թէ այն ատեն երկուստէք գտնուէին լայնախոհ եւ իմաստուն առաջնորդներ, այս խզումը արգիլելու եւ գտնելու լայն գործակցութեան մը գետինը, քանզի այն ատեն պիտի լուծուէր բարեկարգութեան հարցը, որ խորմեան Հայրիկէն սկսեալ մինչեւ այսօր կը յուզուի եւ դեռ ո՛վ գիտէ որքա՛ն ժամանակ պիտի յուզուի, արժելով թուղթ ու մելան, ժամանակ եւ մարդային տաղանդներու խոնջմանք:

Հայ եկեղեցւոյ բարեկարգութիւնը ուրիշ կերպով չըլլար, եթէ ոչ ետ երթալ դէպի «Առաքելական եկեղեցւոյ» առաջին դարը, դէպի Քրիստոսի Աւետարանը: Փանդի հարկ է խոստովանիլ թէ Հայ Առաքելական եկեղեցին ներկայիս իր լայնախոհ եւ ռամկավարական հիմերու վրայ դրուած սահմանադրութիւնով իսկ չկրնար խմբական հոգեւոր կեանքը մշակել: Յաճախ կարելի է հոն գտնել անհատ հոգեւորներ, բայց ո՛չ խմբական շարժում, միաբանական, փառաբանական, վկայութեանց, աւետարանչական հաւաքովներ, քանզի պատարագ եւ այլեւայլ վրնասակար հաւատալիքներ եւ դարերու ընթացքին սպրդած օտար վարդապետութիւններ եկեղեցւոյ անտանիւի եղած ծանրութիւններ ու ըմբռնումներ խեղդամահ կ'ընեն հոգեւոր կեանքը եւ արթնութիւն մը անկարելի կը դարձնեն: Իրաւ եղան տեղական արթնութիւններ Մարաշի, Այնթապի եւ ուրիշ կարգ մը քաղաքներու մէջ, բայց անոնք կամ չկրցան գլուխ հանուիլ եւ կամ միսիոնարներու կամ աւետարանական քարոզիչներու միջոցաւ քաջալերուեցան:

Երբ այս կէտերը կը թուենք, տրամաբանող միտք մը անմիջապէս կ'ըմբռնէ թէ միսիոնարներու ներկայութիւնը յիշաւի նախախնամական եղած է հայ իրականութեան համար, քանզի ինչպէս հին ժամանակներու մէջ այսպիսի կրօնական շարժումները (Պաղիկեան, Թոնթրակեան, Մծղնէական եւն), որոնք նախապէս գուտ հոգեւոր շարժառիթներով երեւան եկած էին, խեղդուեցան եւ կամ հալածուեցան եկեղեցիին ու կառավարութեան ուժով, նոյնիսկ երկրէն դուրս, թերեւս այս անգամ ալ հալածուէին հայրենիքի սահմաններէն եւ Հայ հիւկնօները իրենց խղճի ազատութիւնը պահելու համար օտար ափեր ձեռք առնէին, մինչդեռ միսիոնարներու հսկողութեան տակ մնացին անոնք, որպէս Հայ, եւ հաւատացեալ Հայեր: Հայ Աւետ. եկեղեցին անցեալին մէջ բարձր հաւատքի մարդիկ սնուցած եւ մեծցուցած

է իր ծոցին մէջ որոնք աղ եւ լոյս եղած են իրենց ընդհանուր ազգին:

Կը խորհինք թէ այս անգամ հոս կանգ պիտի առնենք, եթէ Տէրը կամի մեր խորհրդածութիւնները ուրիշ հարցի մը մասին յառաջիկային շարունակելով, եւ ուստի կ'ուզենք մեր քսածները ամփոփել մէկ խօսքով թէ միսինաբութիւնը մեծ ծառայութիւն մը մատուցած է Հայ ազգին մէջ հոգեւոր կեանքի տեսակէտով: Ու դեռ այսօր, Հայ իրականութեան մէջ, կարելի է հոգեւոր վերածնունդ մը, քանզի մեր մէջ գոյութիւն ունի Աւետ. եկեղեցին, ազատ կաշկանդումներէ ու նաեւ կայ Աւետարանը, մեր կեանքի առաջնորդը: Առաքեալը կ'աղաղակէ, «Ինչպէ՞ս պիտի լսեն առանց մէկուն քարոզելուն»: Ինչ որ եղած է անցեալին մէջ Բիւթանիոյ, Գաղատիոյ, Խարբեղի, Կիլիկիոյ բոլոր Միութիւններուն մէջ, արդիւնքը եղած է Աւետարանի ոքանչիւ քարոզութեան հաւատացեալ միսինաբներու ձեռքով: Շատ ջանքեր եղան, տաժանակիր աշխատանքներ ու ճիգեր, բայց երկիրքի փառքին համար ալ շատ հոգիներ ազատուցան: Փա՛ռք Տէրո՛յը նախախնամութեան:

Պօրտ միսինաբութեան գործունէութեան համար միայն այսքան կը ցանց խօսիլ, բայց պէտք է արդար ըլլանք նաեւ ճշմարտութեան հանդէպ: Անոր միսինաբները զօրազոյաբար նոյնը չեն վերջին 30-40 տարիներուն մէջ: Պօրտի տնօրէնութիւնը յաճախ սխալած է իր ընտրութեանը մէջ. զրկած է միսինաբներ յաւէտ արկածախնդիր սփօրդիկներ, գորոնք Սուրբ Հոգին հաստատած եւ կնքած չէր, որոնք մօտէրնիզմի աւերիչ շունչին տակ թրծուած ըլլալով, անոր ազդեցութեան ենթարկելու ջանացին նաեւ Հայ Աւետ. եկեղեցիներու բուրումնաւից ծաղկաստանները: Քանզի ասոնք ներկայիս Սուրբ, Յոնաստանի, Եգիպտոսի, Ամերիկայի մէջ խուլ եւ յուսահատական պայքար կը մղեն այդ սաստկաշունչ քամիին դէմ իրենց նաւը ճշմարիտ ուղղութեան մէջ պահելու համար: Եթէ Պօրտ չունի ճշմարիտ միսինաբներ, լաւ կ'ընէ խոռովեալ եկեղեցիները այլեւս բոլորովին հանգիստ թողելով եւ իր գործունէութիւնը դադրեցնելով: Քանզի գործը Աստուծոյն է եւ Աստուած մաշող կրակ է:

Հայ ազգը, նոյնիսկ Հայ Աւետ. եկեղեցին դեռ ներկայիս պէտք ունի միսինաբներու, որոնք հոգիներու փրկութեան տեսչով վառուած կարեւոր կենալ Աստուծոյ ու ազգին մէջտեղ սրբազան նուիրումով մը, եւ հանգիստ չընեն, մինչև որ Տէրը հաճի բնակիլ Հայ ազգին մէջ: Յ. Ն. Ղ.

ՀՈԳ. ԿԵԱՆՔ:

«ԻՆԾԻ ԱՆ ԵՐԵՒԱՆ»

Պօղոս առաքեալ յարութեան խորհուրդին շուրջ բանաձեւ մը կը ներկայացնէ Ա. Կորնթ. ԺԵ. գլուխով, որպէսզի իրեն ժամանակակից եւ նաեւ ապագայ մարդկային սերունդը այս կարեւոր խնդրոյն շուրջ Սուրբ Հոգւոյն լուսաբանութիւնը ունենայ:

Ամբողջ գլուխը Քրիստոսի, հաւատացելոց եւ բոլոր մարդկութեան յարութիւնովը կ'զբաղի: Ծով խորհուրդներ, պերճ մեկնութիւններ թագնւած կան հոն. կարելի է անոնց վրայ ժամերով խորասուզուիլ եւ անյազօրէն սքանչանալ:

Արդ, առաքեալին ներկայացուցած այդ բանաձեւին յառաջաբանին մէջ, իր մէջ բերած մէկ վկայութիւնը եւ ունեցած փորձառութիւնը ուշադրաւ հանգամանք մ'ունի եւ Պօղոսի աներկբայ համոզման բոլոր պատճառները այդ փորձառութիւնը իբր աղբիւր ունի, առանց որոց Քրիստոսի յարութիւնը եւ Պօղոսի երեւումը բանացի արժէքէ զուրկ պիտի ըլլար: Ուրեմն շանք անոր շուրջ մտամփոփուիլ:

— «Քրիստոս մեռաւ... խաչուեցաւ... յարութիւն առաւ... երեւցաւ... ամենէն ետքը որպէս թէ վիժածի մը՝ ինծի ալ երեւցաւ:

Կը հասկնա՞ք խորհուրդը: «Ինծի ալ երեւցաւ», ինչ կը միացնէ բարոյական վիճակի մը ներգործութեան նոյն դէպքին հետ տեղի ունենալը: Պատուական Պօղոսի անձը այս տեսիլքով յանկարծ մտքէն չանցած երկու կենսական ճշմարտութեանց առջեւ գտաւ ինքզինքը: Տեսաւ իր եւ Յիսուսի անձին քօղազերծուիլը...

Տեսաւ Յիսուս նազովրեցիներէն փառաւորուած՝ սրբութեան լոյսին մէջ մարմնացեալ, դարձած գերիշխան, մաշող Աստուած: Իսկ ինք, այդ բացուած լոյսին առջեւ — զՈր մարմինին տկարութեան առջեւ աւելի միտքով կը դիտէր ու կը բաղդատէր — ձախողած, անարգ, նկուն... վիժած:

Բայց ինչո՞ւ այս անողոք վճիռը — վիժած:

Պիտի ստիպուինք նախամարդուն մէջ փնտռել պատճառը: Վիժած բառը կը նշանակէ կեանքի մը ձեւակերպման եւ անոր նախընթաց պատճառին միջեւ տեղի ունեցած մահացու արկածը:

Աստուած Իր հոգէ շինած մարդուն մէջ կենդանութեան լոկ նախնական գործն ըրաւ «կենդանի շունչ», վիճակելով անոր, եւ թողուց որ

մարդն ինք ձգտի մնացեալին — «Կենդանարար հոգի», ին, կեանքի բացարձակ կազմութեան: Սակայն Ադամ, նախամարդը, անտեսեց իր մէջ սկստւած կենդանութեան զլխաւոր ուղղութիւնը եւ փոխանակ կեանքին — կենաց ծառին — երկըննալու, կեանքը ճաշակելու, մահուան երկընցաւ ու տեղի տուաւ վիժումին:

Կեանքի այս մահացու ձախողութիւնը պատճառ եղաւ որ Աստուած մարդկութեան երկրի վերայ սերնդագործութիւնը սեւ քօղով մը պատանքուած տեսնէ այլեւ: Ամենագէտն Աստուած այս դառն ճշմարտութիւնը բաց զրքի մը պէս իր մտքին առջեւ դրաւ, մինչ բնական է որ վիժած մարդկութիւնը առանց Աստուծոյ ձայնին, իր վրայ կախուած վճիռին գիտակցութիւնը չունեցաւ բնաւ:

Արդ, յայնդուզն Պօղոս, անգիտակ իր պատանքին, փորձեց հակառակել մարմինին ճնշիչ մթնոլորտը, շնչել անարգանքը եւ երկնաւ կենաց ծառին: Սպառնալիք ու մահ փչեց տիրող շփոթութեան — մարդուն արգարանալու ջանքը արհամարհող տարրին — եւ «կրթուած», «Աստուծոյ նախանձաւոր», «Աստուծոյ առջեւ բարի խղճմտանք վարող», «արդար», եւ «անարատ», տիրողոսները ճակտին, ուղեց իր եւ իր ցեղին վրայ ծանրացող աստուածային զայրոյթը խնդութեան փոխել...:

Մեզի պէտք է կարծել տայ թէ Պօղոսի վերայ արձակուած «վիժած», վճիռը անոր վատթար մէկն ըլլալուն մէկ հաւաստիքն էր: Ընդհակառակն, Պօղոս ամենէն մաքրակրօն եւ մաքրակենցաղ մարդն է որ ճանչցուած ըլլալ պատմութեան մէջ:

Փենեհէս մըն էր ան (Թուոց ԻԵ.): Իր մէջ Աստուծոյ օրէնքին եւ Անոր Իսրայէլին ազատագրութեան նախանձաւորութիւնը կը բռնկէր: Կ'ուղէր Իսրայէլը բարձրացնել այն բարձունքին վերայ զոր ինք կ'ըմբռնէր եւ ուր ինքը կը գըտնուէր: Իր անձին մէջ ինքզինք կեանքին հասած կը տեսնէր: Ուսած էր եւ լուսաւորուած. կրնար ինքն իր վրայ գաղափար մը կազմել: Եթէ հըպարտանալու վտանգը չըլլար, կրնար համարձակօրէն խորհիլ թէ, եթէ երկինք բացուէր, մահաւանդ Դամասկոսի ճամբուն վրայ, Ենոփքի մը, կամ Եղիայի մը վիճակուած փառաւոր վարձքը պիտի ըլլար իր բաժինը:

Այսպէս, երբ Պօղոս իր կրօնական ու բարոյական բարձունքը հասած էր տքնաշան, Աստուած ալ դարանակալ եղածի պէս համբերութեամբ կ'սպասէր այն վայրկեանին երբ ապշու-

թեան պիտի մատնէր անոր իր անձին վրայ ունեցած բոլոր, մարդկօրէն բանացի համարումները ու փոխարէն, անոր դրօշմէր թունդօրէն խոնարհեցուցիչ փորձառութիւն մը նաեւ կեանքի նոր յայտնութիւն մը:

Ուստի բացուեցաւ երկինք, սակայն առանց մեծարանքի այդ «արդար» ճամբորդին, ու այդ բացուածքէն Աստուծոյ կրկն լոյսը կեդրոնանալով քամուեցաւ անոր բոլոր էութեանը մէջ, կարծես Յայտնութեան «հոս ելիր»-ին տեղ Ծննդոց «ո՛ւր ես»ը արձագանգելու, ու ա՛հ, իր բարոյական ու ֆիզիքական կատարէն, կարծես շանթահար, փլաւ իր ծունկերէն փռուելով փռշիտն վերայ փռշի ըլլալու...:

Հող, անոր փռելթաթախ գանկը, զինք լեցնող լոյսին տակ, նոր հայեցակէտով մը, առաջին անգամ ըլլալով, տեսաւ եւ վճռեց ինքզինք «որպէս վիժած»...:

Կրնայ ըլլալ թէ վճռին արտայայտութեան շօշափելի գոյնը աստիճանաբար միայն զարդացաւ, բայց իր միտքը այդ պահուն ընդունեց վճռին աստուածային դրօշմը: Մարդ մէկ վայրկեանի մէջ ծով ճշմարտութիւններ կը տեսնէ միտքով, թէպէտ անոնց նկարագրական կարգաւորումը օրեր առնէ: Պօղոս հող տեսաւ Աստուծոյ եւ իր միջեւ տարածուող հեռաւորութիւնը որ կը համեմատի մահուան եւ կեանքի միջեւ գտնուող տարածութեան, բայց չափելու մաթեմատիքական գործը, եթէ կարելի է այսպէս ըսել, ըրաւ, տեսնելէն վերջ, փակ աչքերով, կեդրոնացած մտքով, երեք օր, — նաեւ մինչեւ մահ — չափեց չափչփեց տեսիլքին այս ճշմարտութիւնը:

Այնուհետեւ անհատական գոհունակութիւն չէր փնտռեր: Փոխան «ուրիշ մարդոց պէս չեմ, շնացող, կամ այս մաքսաւորին պէս», խօսքին, «բնութեամբ բարկութեան որդիներ էինք», կը մղուէր ըսել: Ընդունած նոր լոյսին տակ անձնական արժանիքները աղբակոյտի մը վերածուեցան: «Մարմինիս մէջ բարի բան մը չընակիր», «մեղաւորներուն ամենէն մեծը», «ի՛նչ խղճալի մարդ եմ ես, ո՛վ պիտի ազատէ զիս այս մահացու մարմինէն»:

Տրամաբանելով զնաց ու ինքզինք դասեց կիրքի տէր, բարոյապէս իր ալ աչքին մեռած, պոռնիկներու, մաքսաւորներու եւ հեթանոսներու հետ ըսելով, «մենք ալ ձեզի պէս կիրքեր ունեցող մարդիկ ենք, Աստուծոյ առջեւ մարմին մը պիտի չարդարանայ»:

Ահա այն աւագ գիտակցութիւնը զոր Պօղոս ունեցաւ հոգեւոր կեանքի համոզուելու, ըս-

կըսելու եւ անոր մէջ զարգանալու համար: Սակայն այս գիտակցութիւնը կարելի եղաւ միայն Աստուծոյ լոյսին հետ բաղդատուելու շնորհքովը:

Առանց բաղդատութեան դնելու, բանի մը արժէքը չճշդուիր, և բան մը ինքն իր վրայ չբաղդատուիր:

Պէտք է հիւանդը առողջին հետ բաղդատել, ազէտը գիտունին հետ, մեռածը ողջին հետ, որպէսզի տարբերութիւնը իմացուի:

Այսպէս, բացորոշ գաղափար կազմելու համար, մարդուն բարոյական արժէքն ալ պէտք է Աստուծոյ բարոյական արժէքին հետ համեմատութեան դնել:

Անիմաստ է մարդոց բարոյականը, որքան ալ քիչ շատ տարբեր մակարդակ ներկայացնէ, իրարու հետ չափուելով բարոյականութեան երկու ծայրերը ճշդել: Մարդուն բարոյական ու կրօնական ամենէն զարգացած տեսութիւնն իսկ բաւական չէ վերջնական և արդար վճիռ արձակելու այս կէտին շուրջ: Մարդկային լաւ համարուած շատ մը սկզբունքներ, որ առհասարակ քրիստոնէութենէ քաղուած են, այնպէս մը շաղուած են մասնաւորապէս փիլիսոփայութիւններով — ինչպէս օրէնքը փարիսեցւոց աւանդութիւններով — որ այլեւս կը խրտչեցնէ աստուածային սկզբունքներու տակ առնուած անհատը: Անոնց մէջ աստուածային բնութիւնը կը պակսի:

Սուրբ Գրոց մէջ յիշուած Նիկողեմոս մը, Պօղոս մը եւ Կոռնելիոս մը անտարակոյս առաջնակարգ տիպարներ են մարդկային դատումին առջեւ: Եթէ մարդոց հետ չափուէին, իրենց արժանիքը ապահով պիտի մնար: Սակայն այն օրը որ Աստուծոյ լոյսին մէջ բերուելով Աստուծոյ արդարութեան, սրբութեան եւ փառաւորութեան մէջ կշռուեցան՝ ամօթահար ծալուեցան իրենց բարոյական ստորնութեանը վրայ: Իրենց «օրիսն աս էր», «բարեպաշտ», «աստուածափախ», «ողորմած», եւ «աղօթասէր», նազելի վարդերը ապականութեան նողկանքի փոխուեցան իսկոյն:

Հոգեւոր կեանքը բոլորովին տարբեր է արժանիքներու այս ճոխութենէն: Անհատական արժանիք բնաւ գոյութիւն չունի հոն: Փորձառութեան, համոզման, խօսքի, դաղափարի, հաւատքի, գիտութեան, յայտնութեան եւ կեանքի նորութիւնն է այն: Տեսիլքի մը գիտութիւնն է, պատերազմի մը դաշտին բոլոր վիճակներուն մէջ: Մարմինի եւ արիւնի հաւատքով եղած բացակայութիւնն է ան, ուր հոգին է լիազօր:

Յաւիտեական ճշմարտութեանց յայտնութիւնը չբացատրուիր խօսքով: Չայն անհատապէս շօշափելի դարձնելու համար անհատական հետազոտութեան ձգտելու է: Ան որ այս թելադրութենէն խոյս կուտայ՝ կը մատնէ իր քմահաճոյքի մը ծառայելը: Այսպիսին Աստուծոյ յայտնութիւնը չպիտի ունենայ իր փրկութեանը համար. անոր ըլլալիք աստուածային յայտնութիւնը դատաստանին վերապահուած է:

Առհասարակ մարդիկ իրարու համոզումներ կը մերժեն ընդունիլ: Այս վերաբերումը, որքան ատեն որ մաքուր կը պահէ իր աղբիւրը՝ հաճելի է Աստուծոյ: Արդարեւ Ան կը փափաքի ու նաեւ տնօրինած է որ հոգեւոր ժողովուրդը «Աստուծոյ սորված» եւ «Աստուծոյ ծնած» ըլլայ, որպէսզի ինք փառաւորուի ու ամէն ոք հաստատ ըլլայ իր համոզման: Բայց ըսենք նաեւ թէ աստուածային յայտնութեան դրօշմը որ աստիճանի ալ անհատականութեան կնիք կը՝ երբեք չհակասեր Սուրբ Մատեանին — Աստուածաշունչին: Ընդհակառակը, Աստուծոյ բոլոր գործերն ալ իր խօսքին հետ ներդաշնակութեան մէջ են:

Աստուածաշունչը նոյնքան ազդու դեր կը կատարէ մարդուն բարոյականին վրայ որքան երկինքէն խուժող լոյսը կատարեց Պօղոսի վերայ: Անոր էջերը բոցեր կը նետեն մարդուն բնական սրտին վրայ — կը յանդիմանեն, կը սաստեն, կը դատապարտեն... Կ'սպաննեն: Այդ խօսքըն է որ կ'ըսէ մարդուն, «Մեղքին վարձքը մահ է», «այն անձը որ մեղք կը գործէ, անիկա պիտի մեռնի»:

Անտարակոյս շատ մտքեր խիստ պիտի զետնեն այն հետեւութիւնը որով կ'ըսենք թէ Աստուծոյ սրբութիւնը բոլոր մարդկութիւնը իր բոլոր արժանիքներովը անխնայ կը դատապարտէ: «Ուրեմըն», պիտի ըսուի, «ինչպէ՞ս մօտենալ այդ լոյսին. միթէ կարելի է փափաքել մահացու վրձոնի մը գիտակցութեան», Ո՛չ, լաւ չէ որ մարդ ինքզինք այդ լոյսին տակ ճանչնայ: Քրիստոնէութիւնը անբաղձալի է և կացութեամբ անտանելի ու անուելի՝ եթէ մարդս ինքզինքին նայի՝ «դառնութեան եւ անիրաւութեան կապին», մէջ զահալիթած, բարոյապէս զգուելի ու ահաբեկիչ:

Բայց մեր բնաբանը ու Աստուծոյ շնորհքը չի թուլատրեր որ հոս այս տխուր կացութեան մէջ մնանք: Աստուած կ'ուզէ մեր մեռած ըլլալը գիտցընել մեզի, սակայն կ'ուզէ նաեւ կենդանարար գիտակցութեան առաջնորդել:

Եթէ տեսիլքին մարդկային կողմը տեսանք,

ընդառաջ երթալով տեսնենք նաեւ աստուածային կողմը:

Ան որ Աստուծոյ լոյսին տակ ինքզինք ճանչցած չէ՝ կոյր մըն է զգացումով եւ իմացակալութեամբ:

Իսկ ան որ ինքզինք ճանչցած է, գիտակից է իր դատապարտութեան եւ իր յաւիտենական ահռելի կացութեան: Հետեւելով կրնանք խորհիլ թէ, դատաստանի ժամանակ, բոլոր անապաշխար մարդոց գիտակցութիւնը հոս կանգ պիտի առնէ: Լման գիտակցութիւնը որ Աստուծոյ մէկ պարգեւն է, ալ գոյութիւն չպիտի ունենայ իրենց համար: Պակաս գիտնալուն, փրկութիւնը չգիտնալուն վարձքը դժոխքը պիտի ըլլալ իրենց:

Իսկ հիմա, Աստուծոյ օգնութիւնով, ցոյց տանք թէ ինչ է «լման գիտնալ»ը:

Երբ Պօղոս Քրիստոսի լոյսին հետ բաղխելով, բաղդատուելով, տեսաւ իր արդարութեան վիժումը, մնաց ինքն իր վրայ ընկնուած: Տեսաւ թէ Աստուած այնքան հարուստ է փառքով, մինչ ինք այնքան աղքատ: Մտածեց թէ զայն ունենալ կարելոր է իր խոոված, ալեկոծ մտքին ճշմարիտ խաղաղութեանը համար. բայց ինչպէս, քանի որ Աստուած ալ իրեն գործելու արտօնութիւն չէր տար, «վիժած», անուանարկութիւնով զինք բանի տեղ չէր դնէր:

Իր վերեւ շողացող աստուածային լոյսը զայն դարձուածքներով մինչեւ աստուածային փառքին փափաքելու բերաւ: Արդ, տեղին էր որ ականջին հնչէր.

— Ելի՛ր ու քաղաքը մտի՛ր ու քեզի պիտի զրուցուի...:

Յուսահատը պէտք էր քաջալերուէր ու բարոյապէս մեռածը իր յարութիւնը պէտք էր ունենար:

Եւ Պետրոսը կոռնելիոսի զրկող Տէրը Անանիան կը զրկէ Պօղոսի սր իր փորձառութենէն կարեկցութեան խօսքեր կ'ուզէ ու լրացուցիչ բացատրութիւններով կեանքի կ'առաջնորդէ զայն:

— Սաւուղ եղբայր, վեր նայէ... մեր հայրերուն Աստուածը քեզ ընտրեց, որպէսզի իր կամքը ճանչնան ու այն Արդարը տեսնեն եւ Անոր բեթէն ձայն լսեն... եւ հիմա ալ ինչո՞ւ կ'ուշանաս, ելի՛ր, մկրտուէ ու մեղքերդ լուա Անոր անունը կանչելով:

Ժամանակն էր որ Պօղոս վեր նայելով, իր ընկճում վիճակէն թօթափուելով, խորհրդով ճախրէր մինչեւ Աստուծոյ գահը ուր Յիսուսը խաղած էր փառքով: Իր վրայ սեւեռուած աչքերը պէտք էր դառնային Յիսուսի վրայ:

Գտած էր իր վիճակը մարդկութեան դասուն մէջ՝ «Ազամով ամէնը կը մեռնին», հիմա փնտռելու էր ելքը, դարմանը, կեանքը, յարութիւնը:

Անգամ մը եւս մտամփոփ թափանցեց եւ սերտեց Յիսուսի անձը իր աստուածային բընութեանը մէջ, կեանքով հարուստ...:

Եւ երբ կը դիտէր, ո՞վ դարմանք, այդ խիստ բարձրացած Քրիստոսին մէջ տեսաւ վիժած մարդկութեան կեանքի սերմը, յաղթական Ազամ մը ու նոր սերունդ մը որուն մեղքին հատուցում է եղած: «Վասնզի ինչպէս Ազամով ամէնը կը մեռնին, նոյնպէս ալ Քրիստոսով ամէնը կենդանի պիտի ըլլան»:

Եւ ի՞նչ խրախճանք, տեսաւ ինքզինք ապահովագրուած Յիսուսի մէջ երկնաւորներուն հետ: Տեսաւ Քրիստոս իր մէջ «փառաց յօլոր», ու ասոր վրայ, երախտագիտութեան խորոհնի շունչով, սկսաւ գովաբանել, երկրպագել:

— Օրհնեա՛լ է Աստուած... Իր փառաւոր շընորհքին գովութեանը համար, որով մեզ զարդարեց Սիրիլիին ձեռքով, որով փրկութիւն ունինք մենք... մեղքի թողութիւնը... իմաստութեամբ ու գիտութեամբ:

Գտա՛ւ Յիսուսի մէջ իր սրտին կարօտը՝ գիտութեան բոլոր գանձերը. սկզբունքներու բացարձակ եւ սուրբ ազատութիւնը:

Եթէ տեսիլքը զայն մեռցուց իր բոլոր արժանիքներէն — որովհետեւ այդ արժանիքները իրենց մէջ ապականութիւն կը կրէին, նաեւ զայն կենդանացուց, բայց աստուածային արժանիքներով — ունեցաւ երջանկութիւն, կեանք, գիտութիւն. բոլորն ալ ձրի՝ Աստուծոյ առատաձեռնութենէն:

Ո՛հ, ինչպէ՛ս գնահատեց ան տեսիլքին հրաշալի պարգիւը իր մէջ ներգործուած վճիռին ազդեցութենէն վերջ: Տեսիլքին առաջին ազդեցութիւնը պատճառ հանդիսացաւ սակայն որ եղած պարզեւիտ գերազանց մեծութիւնը ճանչնար: Այս ցաւով սկսած բայց յետոյ դարձած պատուական փորձառութիւնը Պօղոսին ըսել տուաւ դառն ժամերու մէջ, «Միշտ ուրախ ենք»: Եւ դաւանութեան տագնապի շրջանին ան մնաց հաստատա՝ միտ:

••

«Ինծի երեւցաւ»ը Պօղոսի կեանքին անդրադարձումներուն մէջ թանկագին նշանակութիւն ունի, որովհետեւ ինք ալ յարութիւն առաւ մեռելներէն երբ Յարուցեալը տեսաւ:

Ո՞վ կ'ուզէ որ Յիսուս իրեն ալ երեւնայ:

Թարգ. Տ. ԳԱՐՍՄԱՆՈՒԿԵԱՆ

ԵՂԱՅՐԱԿԱՆ ՓՈԽԱԴԱՐՁ

ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ

Պ... 7 Մայիս 1934

Տէրոջմով սիրելի եղբայր,

Դեռ այսօր է որ կուգամ Ձեզի շնորհակալութիւնս յայտնելու, այն նամակին համար, որուն մէջ Ձեր ցաւակցութիւնը յայտնած էիք իմ սիրելի մայրիկիս մահուան առթիւ:

Տէրը ամէն բան լաւ ըրաւ: Այն օրը ես անձամբ ծանր գործողութեան մը ենթարկուած կը պառկէի հիւանդանոցին միւս ծայրը եւ կը յուսայի շուտով մայրիկիս հետեւելու:

Գործողութիւնը առանց արդիւնքի մնաց մարդկային տեսակէտով՝ ա՛լ կարելի չէ ինձ օգնութիւն, ի բաց առեալ Տէրոջմէն: Այժմ բաւական զօրացած եմ, բայց բժշկուած չեմ: Կը մնամ որպէս Յիսուսի մէկ կապուածը, մինչեւ որ զիս Իրեն առնէ: Ու այս ալ շնորհք մըն է: Փափաք ունիմ մեկնելու եւ Բրիտանիոյ հետ ըլլալու, բայց լուրթեամբ կ'ողգեմ Անոր ժամին սպասել: Ո՛վ գիտէ, որքան շուտով պիտի գայ Անիկա Իր քովն առնելու Իրենները:

Հիւանդանոցէն տուն վերադառնալու օրս ինձ միակ նեցուկ եղող աղջկանս ոտքը դարձած ըլլալով, չէր կրնար շարժիլ, ու հիմա թէն կը քալէ, բայց շատ քիչ: Կը տեսնէք թէ մենք կը յանդիմանուինք ու կը պատժուինք, բայց Տէրը մեզի մասնաշաղկապ սէր ցոյց կուտայ ասով...

Սիրելի եղբայր, երբ որ մեր փառաւոր Տէրը գայ, դուք եւ Ձեր եկեղեցին պատրաստ եղէք:

Սրտագին բարեւներով եւ ամենաջերմ մաղթանքներով Ձերդ

X

ՄԱՀՈՒԱՆ ԱՆԿՈՂԻՆԻՆ ՄԷՋ ՓՐԿՈՒԱԾ

«Օրհնեալ ըլլայ Աստուած ու մեր Տէր Յիսուս Բրիտանիոյ Հայրը եւ ամէն մխիթարութեան Աստուածը, որ մեզ կը մխիթարէ մեր ամէն նեղութիւններուն մէջ, որպէսզի մենք կարող ըլլանք մխիթարել զանոնք՝ որ ամէն նեղութիւններուն մէջ են, այն մխիթարութիւնով որ մենք Աստուծոյ կը մխիթարուինք» Բ. Կոր. Ա. 3, 4:

Մայիս 4ին, ազգականներէս մէկուն՝ Աբրահամ Թուխմանեանի մահամերձ վիճակը գուժող

հեռագիր մը ստացայ, որմէ հազիւ երեք ժամ վերջ՝ Տէրը զայն մերկացուց իր մահկանացու մարմինէն, յաւիտենական փառքին մէջ ընդունելու նպատակաւ:

Աբրահամ ծնած էր Չնգուշ: Թէեւ հոգեւոր ծընողքի գաւակ եւ բնութեամբ ալ սկզբունքի տէր ու ճշմարտասէր երիտասարդ մըն էր՝ բայց ոչ փրկուած: Յաճախ կը հարցուէր իրեն, «Աբրահամ ե՞րբ պիտի ապաշխարես»։ — Երբ այս աղտոտ միջավայրս փոխեմ, կը պատասխանէր միշտ: (Ընդհանուր երիտասարդներու ունեցած սխալ մէկ գաղափարն է այս որ Աստուծոյ խօսքին պակաս ընթերցումէն յառաջ կուգայ Յովհ. Ժ. 18, Փիլ. Բ. 15. այլապէս պիտի յիշէին Ենովքը, Նոյը, Աբրահամը, Յովսէփը, Դանիէլը իր երեք ընկերներով որոնք Աստուծոյ Աստուծոյ հետ քալեցին մինչեւ մահ սաստիկ խաւար ժամանակներու եւ շատ աղտոտ միջավայրերու մէջ Դանիէլ. Լ. Բ.): Բայց Աստուած որ «մէկ մեղաւորի մեռնիլը չուզեր... հապա միջոցներ կը հընարէ՝ որպէսզի աքսորուածը Իրմէ աքսորուած չմնայ», Բ. Թագ. Ժ. 14, մեր չակնկալած եղանակով Աբրահամին միջավայրը փոխեց՝ տունէն հիւանդանոց ու անկէ ալ վերին հայրենիք:

Աբրահամ դեռ ապաշխարած չէր երբ ըզդաւտապի ծանր հիւանդութեամբ հիւանդանոց փոխադրուեցաւ: Հոն եօթը օր ապրեցաւ, որոնցմէ միայն առաջին երեք օրերուն մէջ կրնար հասկընալ եւ խօսիլ: Այս օրերուն մէջ իր մեծ քրոջմէն կը խնդրէ որ Աստուծոյ խօսքը կարդայ իրեն եւ աղօթէ: Իր ընտանիքի անդամներուն հետ նաեւ շատեր կ'աղօթէին «Տէր, բժշկէ Աբրահամը եթէ քու կամքդ է, ապա թէ ոչ փրկէ իր հոգին»: Ի պատասխան այս աղօթքներուն Տէրը Իր Սուրբ Հոգիով արթնցուց Աբրահամը, որուն վերջին խօսքերը եղան «Տէր, ողորմէ, Տէր ողորմէ, Աստուած իմ, Աստուած իմ ո՛ւր ես»: Անգլիացի վեր. D. David Morisի վերջին այցելութեան միջոցին, այս սիրելի մահամերձ հոգին, Տէր Յիսուսի անհուն շնորհքովը իր փրկութիւնը կը գտնէ եւ այսպէս մահէն կեանքի փոխադրուեցաւ: Իր լեզուն առնուելէն վերջ՝ դեռ չորս օր ալ ապրեցաւ, որ ժամանակ իր կապուած լեզուին վկայութիւնը դէմքին վրայ դրօշմուած կը կարդացուէր:

Ներքին «անպատմելի խնդութիւնէն», աչքերը ժպտուն եւ «ամէն միտքէ վեր եղող Աստուծոյ խաղաղութիւնը դէմքին վրայ փռուած Աբրահամ մեկնեցաւ այս աղտոտ միջավայրէն դէպի Հայրենիք, «Հօրը Տունը»:

Հոն՝ ուր ալ մեղք չկայ,
Ալ ցաւ չկայ,
Արցունք չկայ,
Ժպիտ, լոյս եւ սէր կայ
Յաւիտեան:

«Ազատէ զանոնք որ մեղքուելու կը տար-
ուին, ու սպաննուելու վրայ եղողները ազատե-
լէն ետ մի կենար», Առակ. ԻԴ. 11:

«Տէրոջը ազադակեցին իրենց նեղութեանը
մէջ, ու զանոնք փրկեց իրենց տառապանքնե-
րէն: Զանոնք խաւարէն ու մահուան շուքէն
հանեց... Թող գոհանան Տէրոջմէն Իր ողորմու-
թեանը համար», Սաղ. ՃԷ. 13-15:

ՎԱՀՍԷ ՍՏԱՄՊՈՒԼԵԱՆ

Պ. Այրէս

Ի ՅԻՇԱՏԱԿ

Վաղահաս եւ դառն բաժանման

Քրորդիս

ԱԲՐԱՀԱՄ ԹՈՒԽՄԱՆԵԱՆԻ

Քաջ, յաղթանդամ իմ Աբրահամ՝
Կանուխ առիր դուն մահուան համ:
Աստուած ինչո՞ւ կարճեց օրդ:
Որ թողուն մայրդ, երթաս հօ՞րդ:
Սիրելիներ ի՞նչ խոր սուգով
Բոլորուեցան անկողնոյդ քով:
Հրեշտակն առաւ, քեզ՝ վեր թռաւ.
Տարաւ հօրըդ գոգը դրաւ:
Ի՞նչ զգացիր երբ այս օտար,
Պիղծ աշխարհէն երկինք մտար:
Մայր սիրելի, եղբայր, քոյրեր,
Մի՛ ողբաք զիս իւրեւ կոյրեր.
Պանդուխտ էի, եկայ իմ տուն.
Յիսուս եկաւ ինձ դէմ ժպտուն:
Փրկչիս շնորհքով եկայ դրախտ,
Հոս չկայ ցաւ, եւ ոչ մի ախտ:
Հոս՝ արեւը ա՛լ չմարիր,
Հոս բնակիչք ա՛լ չեն մեռնիր:
Մէկդի թողունք հին ճամբաներ,
Միշտ մտածենք վերին բաներ:
Տէր իմ, շնորհէ ես ալ տպրիմ
Մինչեւ ի մահ հաւատարիմ:

Քեռիէն

(Բրոֆ.) Մ. Յ. ՊՈՒՃԻԳԱՆԵԱՆ

Ուսթըրթաուն

ԿԵՆԱՅ ԱԾՈՒՆԵՐԷՆ

ԼՍՈՂՆԵՐ ՄԻԱՅՆ

Բայց խօսքը կատարողներ եղէք, եւ ոչ թէ մի-
այն լսողներ՝ ինքզինքնիդ խաբելով: Յակ. Ա. 22

Հաւատքը լսելէն է, ու լսելը Աստուծոյ խօս-
քէն: Հռով. Ժ. 17

Սիրելի բարեկամ, եթէ դուն միայն լսող մը
եղած ես և քու լսելէդ քեզ փրկող հաւատքը չես
ստացած, դուն այս վայրկեանին մաղձի դառնու-
թեան մէջ եւ անիրաւութեան կապին մէջ կը
գտնուիս: Դուն Քրիստոսի չես հաւատար: Աստու-
ծոյ բարկութիւնը քու վրայ կը մնայ: Դուն մե-
ռած ես մինչ կ'ապրիս: Առանց Աստուծոյ, առանց
Քրիստոսի եւ օտարացած ես խոստմունքին ուխ-
տերէն: Իմ հոգիս կը խղճայ քեզի, եւ դուն ինք-
զինքիդ չե՞ս խղճար: Լսողներ միայն, եւ ուստի
առանց հաւատքի, առանց շնորհքի, առանց Քր-
իստոսի: Քրիստոս մեռաւ, բայց դուն Անոր մահ-
ուան մէջ բաժին չունիս: Անոր արիւնը ամէն
մեղքէ կը սրբէ, բայց քու մեղքերդ քու վրայ
կը մնան: Քրիստոս յարութիւն առած է ու Աս-
տուծոյ շնորհաց աթոռին առջեւ կը բարեխօսէ,
բայց դուն բաժին չունիս այդ բարեխօսութեան
մէջ: Նա Իր ժողովուրդին համար տեղ կը պատ-
րաստէ, բայց այդ տեղը քեզի համար չէ: Ո՛հ,
թշուա՛ն հոգի, ո՛հ, դժբա՛ղդ հոգի, Աստուծոյ հա-
ճութենէն զրկուած, Անոր յաւիտենական սիրոյն
թշնամացած, յաւիտենական կեանքէ ժառան-
գազուրկ: Ճշմարտապէս, եթէ Յիսուս հիմա հոս
ըլլար, քու վրայ պիտի լար ինչպէս Նրուսաղէ-
մի վրայ լացաւ ու պիտի ըսէր. «Քանի՛ անգամ
քեզ ժողովել ուզեցի, ինչպէս հաւը իր ձագերը
թեւերուն տակ կը ժողվէ եւ դուն չուզեցիր»:

Ա՛հ, մի մոռնար որ թէեւ քու ներկայ վիճակդ
ահարկու է՝ բայց դեռ աւելի ահարկուն կը սպա-
սէ քեզի: Շուտով պիտի մեռնիս, եւ առանց հա-
ւատքի պիտի մեռնիս: Յիշէ Յիսուսի այն խօս-
քը որ կ'ըսէ, «Եթէ չհաւատաք թէ ես եմ, ձեր
մեղքերուն մէջ պիտի մեռնիք»: Իմ գիտցած
խօսքերէս ամենէն սարսափելիներէն մին է այս:
Խրամի մը մէջ մեռնիլ, բանտի մը մէջ մեռնիլ,
կախաղանի վրայ մեռնիլ, մեզմէ ոչ մին պիտի
փափաքէր, բայց քու մեղքերուդ մէջ մեռնիլ...
ո՛հ Աստուած իմ, ասիկա բուն խոյ դժոխք է:
Եւ յաւիտենական զեհենապարտութիւն: Ո՛հ թէ մեծ
Տէրը փրկէր քեզ: Յաւիտենական կորուստը ան-
խուսափելիօրէն քու բաժինդ պիտի ըլլայ եթէ
առանց դանդաղելու չհաւատաս, քանզի շատ

չանցած ամէն լսողութենէ զրկուած պիտի ըլլաս: Այլեւս քարոզներ չկան, այլեւս շնորհքի հըրաւէրներ չկան: Ո՛հ, ինչե՛ր պիտի չտայիր Աւետարանը մէկ անգամ մը եւս լսելու համար, հոն ուր միայն լալ ու ակոսներ կրճտել կայ եւ դեւերուն յաւիտենական անէծքն ու հայհոյանքը: Ոչ եւս քարոզիչին ձայնը որ կը պաղատի, «Դարձիր, դարձիր, ինչո՞ւ մեռնիս»: Ոչ եւս քու հոգիդ սիրող մէկուն զթալից շեշտերը. հոն պիտի փափաքէիր՝ առեն մը քեզ կրակէն յափըշտակելու համար երկնցած սիրոյ բազուկներուն փաթթուիլ՝ բայց քու շուրջդ ամէն ինչ խաւար եւ անգութ պիտի ըլլայ: Միակ խօսքը որ հոն քեզի կրնայ ուղղուիլ, այս է, «Ան որ աղտոտ է՝ ալ աղտոտ ըլլայ»:

Յուրտ շիրմէն վերջ ուր կ'շտապես,

ներում, շնորհք զուր կ'աղերսես.

Մահ եւ խաւար՝ յոյսն յաւէտ շէջ,

Լո՛ւռ, խո՛ւլ, համր է կրակն անշէջ:

Ա՛հ, հոն տեղ, առեն մը Աւետարանը լսած ըլլալուդ յիշատակը՝ քու թշուառութիւններդ պիտի չմեղմացնէ, հապա ընդհակառակը քու չարչարանքդ պիտի աւելցնէ: Խիղճդ բարձրաձայն պիտի կանչէ, «Ես շնորհքի Աւետարանը լսեցի, ես տեսայ անոր ճշմարիտ ըլլալը փաստող վկաները, բայց ես արհամարհեցի ու մերժեցի նոյն ինքն Աստուծոյ հոգակուած փրկութեանս Աւետարանը: Աւետարան մը, որուն ճշմարիտ ըլլալուն սրտիս խորքին մէջ համոզուած էի, Աւետարան մը, որ կարող էր ապառաժը հալեցնել. Աւետարանի մը որ ինծի հրամցուեցաւ առանց ստակի եւ առանց գնոյ. Աւետարան մը որ ինձ քարոզուեցաւ մանկութենէս՝ մինչեւ ալեւոր ծերութիւնս, ես զայն մերժեցի կամակոր հակառակութեամբ, ոչ թէ որովհետեւ ան ճշմարիտ չէր, բայց որովհետեւ ես ուզեցի սուտի հաւատալ եւ կենդանի Աստուծոյ չհաւատալ: Յաւիտենական Հայր, Դու որ փրկելու ամենակարող ես, թող մի տար որ մեզմէ մէկը գերեզման իջնէ իր աջ ձեռքին մէջ սուտ մը սեղմած, մերժելով ընդունիլ Գու Օրհնեալ Որդւոյդ Աւետարանը: Տէր՝ փրկէ Ձեզ ամէնդ՝ Քրիստոսի սիրոյն: Ամէն:

ՍՊԸՐՃԸՆ

ՍՈՒՐԲ ԳԻՐԲԸ . . .

ՆՊԱՐԱՎԱՃԱՌԻ ՓԱԹԹԵԼՈՒ ԹՈՒՂԹ

Կը պատմուի թէ օր մը Ս. Գրածախ մը Սպանիոյ գիւղերէն մին երթալով յաջողեցաւ ներիշնարու կարգին նաեւ մեծ ընտանեկան Ս. Գիրք մը

ծախել: Գիւղին կաթոլիկ քահանան լսելով Ս. Գրածախին հոգ ներկայութիւնը, վազեց եւ Սուրբ Գիրքը գնողին ձեռքէն յափշտակելով նետեց եւ բարկութեամբ գոչեց, «Այս գիրքերը երբեք իմ թեմիս ժողովուրդին մէջ մուտ պիտի չգտնեն»: Յետոյ նա կիները, մանաւանդ բարեպաշտ, եկեղեցասէր կիները բարկութեան զրգոց, որոնք քարերով վռնտեցին խեղճ զբաժախը:

Վեց շաբաթ յետոյ Ս. Գրածախը իր ճամբորդութենէն կը վերադառնար. ու թէեւ չէր փափաքեր կրկին այդ գիւղէն անցնիլ, բայց ստիպուեցաւ, քանզի իր ճամբան հոնկէ կ'անցնէր: Մըթընշաղին այս գիւղէն անցաւ յուսալով թէ ոչ ոք պիտի կրնար ճանչնալ զինք. բայց մեծ եղաւ իր զարմանքը, երբ գիւղին մուտքին հանդիպած առաջին անձը զայն բռնեց ու հարցուց, «դուն չե՞ս այն Ս. Գիրքը ծախող մարդը:

«Այո, ես եմ», խոստովանեցաւ նա:

— Ուրե՛ն բարի եկար մեր գիւղը, մեզմէ ամէն ոք կը փափաքի քու գիրքերէդ գնել: Մեծապէս զարմացած Ս. Գրածախը հարցուց, «Բայց դուք չէ՞ք այն մարդիկը որ քանի մը շաբաթներ առաջ զիս քարկոծելով վռնտեցիք»:

«Այո, պատասխանեց մարդը, բայց այն օրէն ի վեր մեր վրայ մեծ փոփոխութիւն մը եկած է, եւ գիւղին մէջ ամէն մարդ կը փափաքի քու գիրքերէդ օրինակ մը ունենալ»:

Ահաւասիկ թէ ինչ պատահած էր: Գիւղի նըպարավաճառներէն մին վեց շաբաթ առաջ քահանային պատուտելով նետած Սուրբ Գիրքը առած էր՝ խորհելով գոնէ զայն իբր փաթթելու թուղթ գործածել: Թերթ թերթի ետեւէ պատուելով ծառայած էր փաթթելու աղ, շաքար բրինձ եւ ուրիշ բաներ: Աստուծոյ խօսքը այս միջոցով մուտ գտած էր գիւղին մէջ ամէն խրճիթ: Մարդիկ այս թերթերը կարդալով ծանօթացած եւ հիացած էին Աստուծոյ սքանչելի խօսքին եւ կը փափաքէին ունենալ ամբողջ Սուրբ Գիրքը, որմէ թերթ մը միայն իրենց մէջ մեծ ծարաւ արթնցուցած էր:

Այսպէս, մինչ քահանան խորհած էր Սուրբ Գիրքը ոչնչացնել, նա անգիտակցաբար միջոց դարձած էր անոր տարածման: Այս գիւղը յետոյ քրիստոնէական կեանքի եւ գործունէութեան կեդրոն մը դարձաւ:



Ս. ԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԵՐԳ ԵՐԳՈՑ

Ինչպէս բանաստեղծներ մարդկային հոգւոյն ամենանրբին զգացումները կը թրթռացնեն և անոնց գրուածքներուն մէջ կը նշմարենք մարդկային զգացմանց զարմանալի յատկութիւնը, նոյնպէս երգերու երգը եղող այս գիրքով կ'արտայայտուի Աստուածային սիրոյ ամենախորին զգացումները:

Բոլոր Դիրքը Աստուծոյ շունչն է կ'ըսէ պատգամը, Բ. Տիմ. Գ. 16: Այս առաւել ճիշդ է երգոց բարձրագոյն երգը եղող այն գիրքին համար:

Սիրող հոգին հոն կը գտնէ խորհուրդներ որոնք կը նպաստեն իր հոգեւոր շինութեանը եւ վերջապէս այնքան կը մօտենայ Քրիստոսի եւ Անոր սիրոյ զգացումներուն որ իր հոգւոյն մէջ կը զգայ Անոր սուրբ համբոյրները: Ամէն բան սուրբ է հոն, ամէն բան աստուածային, ամէն բան մաքուր:

Անոր ընթերցումը քաղցր մեղեդիներու եւ գեղատեսիլ ծաղկանց նման հոգին կը հրճուեցնէ, կ'ազնուացնէ, կը վսեմացնէ:

Ազաւնի միամտութեամբ և անկեղծութեամբ սերտողին համար աւելի մաքրուելու, սրբուելու եւ պատրաստուելու միջոց կ'ըլլայ, սակայն անմաքուր սիրտ եւ աչք ունեցողին համար զայն թակդութիւն եւ անկում: Տիմոս Ա. 15, Բ. Պետ. Գ. 16:

Սողոմոնի, այսինքն խաղաղութեան իշխանին, Քրիստոսի երգն է այն, Եսայ. Թ. 6, Իր հարսին՝ եկեղեցիին ուղղած, ինչպէս առաքեալը կը յիշէ Եփես. Ե. 32ին մէջ սքանչելի կերպով յայտնելով Քրիստոսի եւ եկեղեցիին յարաբերութիւնը այր եւ կնոջ բացատրութեամբ: Նոյն նմանութիւնը կը գտնենք Սուրբ Գրոց գրեթէ բոլոր գիրքերուն մէջ: Սաղ. ԽԵ. 10, Եսայ. ԾԴ. 5, 6, ԿԲ. 4, 5, Եզեկ. ԺԶ. 3-14, Ովս. Բ. 19, 20, Մատթ. Թ. 15 ԻԲ. 2-4, ԻԵ. 1-10, Յովհ. Գ. 29, Հոով. Է. 3, 4, Բ. Կոր ԺԱ. 2, Եփես. Ե. 25-32, Յայտ. ԺԹ. 7-9, ԻԱ. 2, 9:

Սուրբ յարաբերութիւն, զոր մարդ իր մեղքին պատճառաւ արատաւորած եւ պղծալից ցանկութեան վերածած է, որուն պատճառաւ միտքը կուրցած միայն գիրքը կը տեսնէ, Բ. Կոր. Գ. 6: Իսկ սուրբ կեանքի հաղորդ մէկը երբ զայն կը կարդայ եւ կը քննէ, հոն կը գտնէ սքանչելի եւ վսեմ խորհուրդներ, զոր անհասկնալի են շնչաւոր մարդուն համար Ա. Կոր. Բ. 14, որովհետեւ այդ խորհուրդներուն ճշմարիտ իմաստը կը հասկըց-

ուի միայն Անոր հեղինակին Սուրբ Հոգւոյն օգնականութեամբ, եւ այն որ հոգիով չի սերտեր այս օրհնեալ գիրքը, աստուածային սէրը ծածկըւած կը մնայ գրին մէջ. իսկ ան որ ամբողջ Սուրբ Դիրքը սերտած է հոգիով, Երգ Երգոցի մէջ կը գտնէ անոր իմաստալից եւ խորհրդաւոր ամփոփումը: Անոր ամէն մէկ համարին եւ բառին մէջ իր աչքին առջեւ կը պարզուի Քրիստոսի սիրոյն սքանչելի տեսարանները, նուիրման եւ զոհողութեան զարմանալի պատկերները եւ վերջապէս հաւատացեալին անկեղծ կոչումը եւ նուիրումը արտայայտող վսեմ գաղափարականը:

Այս գիրքը անդարձին համար մահուան հոտ է դէպի մահ, իսկ հաւատացեալին համար կենդանութեան հոտ է դէպի կեանք Բ. Կոր. Բ. 16:

Աղօթենք որ մեր աչքերը լուսաւորուած եւ հոգիով մաքրուած այս աստուածային նուիրական գիրքին մէջ Քրիստոսի սուրբ սէրէն զատ բան չտեսնեն, եւ Տէրը Ինք տայ որ մենք կըրնանք անոնց մէջ ծածկուած յաւիտենական խորհուրդը տեսնելով ցնծալ Եփես. Գ. 9:

Կը հաւատամ թէ այս գիրքին սերտողութիւնը փրկուածի մը համար բարձրագոյն սիրոյ յարաբերութիւնն է Քրիստոսի հետ. անբացատրելի այլոց, սակայն ծանօթ վայելողին, ուր Քրիստոս Իր արիւնով փրկուած հոգիին հետ կը միանայ, կը նոյնանայ, իսկ հաւատացեալը իր Փեսային սիրոյ համբոյրներովը արբշիտ, ցնծութեան երգեր կ'երգէ: Ղուկ. Ա. 47, Սաղ. ՃԴ. 33, 34:

Փօն տ'Օպէնաս

Ա. Օ. ՓԱՓԱՋԵԱՆ

ՋԱՏԱԳՈՎԱԿԱՆ

ՕՔՍՖՈՐՏԻ ԽՄԲԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

ԽՄԲ.— Կրկին կը վերադառնանք այս ցաւալի հարցին, որ գրեթէ բոլոր քաղաքակրթեալ երկրներու մէջ եկեղեցական հարց մը եղած է, եւ որու մասին թեր ու դէմ արտայայտուողներ կան: Կան նոյնիսկ շատ մը հոգեւոր անձնաւորութիւններ որոնք Օքսֆորտի խմբական շարժման թուլատու կ'երեւին, նոյնիսկ հոգեւոր հովիւներ, որոնք անձամբ կը կառավարեն այդ շարժումները իրենց եկեղեցիներուն մէջ: Բայց մեզի այնպէս կ'երեւի թէ այդ եկեղեցիներուն մէջ ճշմարիտ առաքելական հոգին է որ կը պակսի, ուստի անոնք կերպով մը կ'ուզեն հոգեւոր մակարդակը բարձրացնել իրենց եկեղեցիին մէջ եւ կը դիմեն սոյն խմբակին շարժման մէջ թո-

ներուն, որոնք զժբաղդաբար միայն մեքենայական եւ ամուլ գործունէութիւն մը երեւան պիտի բերեն. արդէն ներկայ ժամանակուան մէջ ունինք եկեղեցական ամուլ գործունէութիւն, շատ խօսք, շատ զործ առանց հոգեւոր արժէքի: Յովհ. Զ. 64:

Ֆրանսահայ եկեղեցիներու մէջ Օքսֆորտի խմբական շարժման ոեւէ վտանգ չկայ: Զգիտենք թէ արդեօք Սուրիայի կամ Յունաստանի՞ մէջ տեղ գտած է այդ շարժումը, եւ ո՞ր աստիճան: Բայց կ'երեւի թէ Ամերիկայի Հայ Աւետ. եկեղեցիներէն ոմանք ազդուած են, ուստի յարմար սեսեցինք այս խնդիրը լայնօրէն ուսումնասիրած մեր եղբօր Վեր. Ա. Զ. Եղոյեանի յօդուածին տեղ տալ և «Բանբեր»-ի բոլոր ընթերցողներուն միանպատ ընդ միշտ լուսաբանելու:

«Բանբեր»-ի Մարտ ամսոյ (1933) թիւին մէջ այս Շարժումի մասին զրուած յօդուածը թելադրեց մեզ զրել այս յօդուածը:

Մեր Տէրն ըսաւ որ մանաւանդ ետքի օրերը «սուտ մարգարէներ» պիտի ելլեն «ոչխարի հանդերձներով»: Գիտենք որ ոչխարն անփնաս է, եւ իր կաթովն ու հանդերձովը (բուրդովը) օգտակար: Բայց մեր Տէրը կ'ըսէ թէ ա՛յ «ոչխարները» են «յափշտակող գայլեր»: Անոր համար մեզի կ'ըսէ, «Զգոյշ կեցէք»: Եւ ըսաւ թէ «իրենց պտուղէն պիտի ճանչնաք զանոնք»: Աս նոյն բաներն ըսաւ, եւ զգուշութիւնը տուաւ, երկրէս ելլելէն անմիջապէս առաջ ալ: Աս «սուտ մարգարէները... շատերը պիտի մոլորեցնեն... եթէ կալիւիլի է ընտրեալներն ալ»: Նորէն կ'ըսէ, «Զգոյշ կեցէք, ահա՛ առաջուրէն ըսի ձեզի»:

Պօղոս Առաքեալ սաստկապէս յանդիմանեց «սուտ մարգարէ մը», թէպէտ ան հազած էր «ոչխարի հանդերձ», վասնզի ան կը կոչուէր «Եղիմաս Բարեյեսու» որ ըսել է «Յիսուսեան Իմաստուն» Գործ. 13. 7-12: Եւ այս Առաքեալը նմանապէս իր մեռնելէն առաջ զգուշութիւն տուաւ եկեղեցիին երէցներուն ըսելով, «Զգուշացէք ձեր անձերուն եւ բոլոր հօտին... քանզի... ձեր մէջ յափշտակող (կամ վնասակար) գայլեր պիտի մտնեն, որոնք պիտի չխնայեն հօտին: Եւ ձեզմէ ալ այնպիսի մարդիկ պիտի ելլեն, որոնք ծուռ քանել պիտի խօսին, աշակերտները իրենց ետեւէն քաշելու համար: Ուստի արթուն կեցէք» Գործ. 20. 28-31: Զասոնք կ'ըսէ երէցներուն, եկեղեցիին առաջնորդներուն, «Պատուելի»ներուն, Քարողիչներուն, Հովիւներուն, Աւետարանիչներուն, (հոգեւոր թերթերուն) խմբագիրներուն, Հո-

գարարձուներուն: Եթէ մեր ժողովուրդները կը մոլորին, ԱՍՈՂԲ պատասխանատու յանցաւորներ են: Ասո՛նք պէտք է ճանչնան գայլերը (ոչխարի մորթով) եւ զգուշացնեն իրենց խնամքին յանձնուած հոգիները:

Պետրոս Առաքեալ կ'ըսէ թէ եկեղեցիին մէջ «սուտ վարդապետներ պիտի ըլլան» Բ. Պետ. 2. 1:

Օքսֆորտի խմբական Շարժումի մասին բան մը ըսելէ առաջ, կ'ուզեմ վկայել թէ մէկու մը անկեղծութիւնը բաւական չէ ապահովութիւն տալ մեզի թէ ինքը ճշմարիտ հաւատացեալ մըն է, կամ ճշմարտութեան քարոզիչ մը: Շատեր զարմանալի անկեղծութիւնով կը քալեն մոլորութեան մէջ եւ կը տարածեն ինչ որ հակառակ է Աստուծոյ խօսքին: Միթէ չե՞նք զիտեր որ շատ մը Պրահայի սկանդալներ, Մահմետականներ եւ Րըսլականներ եւ Քրիսչըն Սայընսի հաւատացեալներ են, բոլորովին անկեղծ են: Շատ մը անկեղծ փարիսեցիներ կային: Բայց ասոնք ամէնը մոլորած են: Պօղոս կ'ըսէ, «Անկեղծութիւն Ե՛ի ճշմարտութիւն»: Երկուքը մէկտեղ զմեզ կ'ընեն ապահով:

Կ'ուզեմ ըսել թէ կրնանք հաւատալ (ինչպէս շատեր կը վկայեն) թէ «Օքսֆորտի Շարժումին» առաջնորդներուն եւ հետեւողներուն մէջ կան անկեղծ եւ բարի մարդիկ, բայց տակաւին ասիկա չորոշեր թէ անոնք «Ճշմարտութեան են»: Մեր Տէրն ըսաւ, «իրենց պտուղէն պիտի ճանչնաք զանոնք»:

Կրօնական իմաստով «պտուղ»ը արտադրութիւն կամ հետեւանքն է «Շարժումի մը (կամ Յարանուանութեան մը) վարդապետութիւններուն: Եթէ շիտակ է որ «մէկը իր սիրտին մէջ ինչպէս կը մտածէ, անիկա այնպէս է», կամ այնպէս կ'ըլլայ, ուրեմն շիտակ ալ է թէ մէկը կը շինուի այնպէս, ինչպէս կը լսէ եւ կը հաւատայ: Հոովմի Քրիստոնեաները սրտանց հնազանդեցան այն վարդապետութեան գաղափարին որ իրենց յանձնուեցաւ (6. 17) եւ այսպէս «մեղքէ ազատուելով արդարութեան ծառայ եղան» եւ իրենց պտուղը ունեցան սրբութեան համար (18 եւ 22): «Աստուծոյ շնորհաց խօսքը կարող է շինելու» Գործ. 20. 32:

Ասիկա բնական եւ հոգեբանական օրէնք է: Օքսֆորտի Շարժումը իր վարդապետութիւններուն համեմատ շինութիւն պէտք է տայ:

Ուստի գիտնալով թէ ինչ կը քարոզէ այս Շարժումը, պիտի կրնանք հասկնալ թէ ինչ հետեւանք պիտի ունենայ ան իր հետեւողներուն վրայ:

Չենք ուզեր անմիջապէս կասկած տալ ընթերցողներուն թէ այս Շարժման բոլոր վարդապետութիւնները սխալ կամ փաստակար են: Ասոնք շատ ճշմարիտ բաներ կը քարոզեն: Եւ հիմա մեր եկեղեցիներուն մէջ քարոզութիւնէ դադրած շատ ճշմարտութիւններ զօրութեամբ կը շեշտեն: Այսու ամենայնիւ այս Շարժումը վտանգաւոր, փաստակար եւ կործանարար Շարժում մըն է, ինչպէս հիմա պիտի տեսնենք: Եւ այնքան աւելի այսպէս է՝ որքան որ աղէկ եւ ճշմարիտ բաներ կը քարոզուի անկեղծ եւ բարի մարդոց բերանով:

Սիրելի ընթերցողներն այս Շարժումին վրտանգաւորութեան դէմ զգուշացնելու համար անմիջապէս ըսելու եմ թէ արդիական մը կրնայ ընդունիլ այս Շարժումին բոլոր վարդապետութիւնները, խոստովանիլ իր մեղքերը եւ հետեւիլ ասոր՝ իբր հաւատարիմ մէկ անդամը, բայց տակաւին միայլ արդիական, իր համոզումներով եւ հաւատքովը, ինչպէս որ մենք կը ճանչնանք զայն: Ասիկա բաւական չէ՝ ճանչնալու համար այս Շարժումին բուն հոգին, եւ վկայելու թէ «Այս դրդումը (Շարժումը) Անկէ չէ որ ձեզ կանչեց» Գաղ. 5. 8: Պարզապէս Օքսֆորտեան Շարժումը գաղափարական յետադարձութիւնէն շատ աւելի նուրբ, բայց նոյնքան աւելի նենգաւոր շարժում մըն է. ուրանալու եւ մերժելու համար Աստուծոյ Շնորհքին բաւականութիւնը: Պօղոս Առաքելոյն այն հին Գաղատացիներուն տուած յանդիմանութիւնները, եւ աւելին ալ կը վայելեն մասնաւոր այս արդիական նոր Գաղատացիներուն:

Վասնզի ստուգուած եւ աղէկ հասկցուած է որ Օքսֆորտեան այս նոր քարոզիչները տեղ չեն տար Տէր Յիսուսի արեան քաւարար գործին՝ ՈՐՈՎ «Աստուած ամէնը կը հաշտեցնէ իրեն հետ» Կոր. 1. 20: Պէնտէկոստէի օրը, քրիստոնէական առաջին քարոզին նիւթը ԽԱՉԵԱՆ Բրիստոսն էր: Եւ Պօղոս կ'ըսէ թէ չէր ուզեր «ուրիշ բան մը գիտնալ, բայց միայն Յիսուս Բրիստոսը, եւ զԱյն ԽԱՉԸ ելած» Ա. Կոր. 2. 2: Երկնից մէջ բոլոր փրկեալներուն երգին նիւթը «ՄՈՐԹՈՒԱԾ ԳԱՌՆՈՒԿՆ է, որ զանոնք ծախու առաւ Աստուծոյ՝ Իր Արիւնովը, ամէն ցեղէ ու լեզուէ եւ ժողովուրդէ ու ազգէ» Յայտ. 5. 9:

Արդարեւ ոչ միայն կ'ենթադրենք, հապա կը հաւատանք ալ որ այս Շարժումին հետեւողներուն մէջ կան հաւատացեալներ որոնք «փրկութիւն ունին Անոր արիւնովը, այսինքն մեղաց թողութիւն»: Բայց պէտք չէ այս Շարժումը ներկայացնել ասոնցմով, վասնզի ամէն մուար դը-

րութիւններու մէջ կարելի է գտնել միամիտ եւ անկեղծ փրկեալներ: Այս Շարժումը պէտք է ներկայացնել իր առաջնորդներովը: Քանի որ ասոնք կրնան պաշտպանել եւ յանձնարարել Տր. Հ. Ֆազտիքի նման անձի մը Աստուածաբանական դիրքը, ասիկա ըսել չէ՝ որ այս Շարժումը կը քարոզէ փրկութիւն մը առանց Յիսուսի արեան:

Այս Շարժման հեղինակը Մր. Պէքմըն անունով մէկն է, որուն համեմատ ասիկա կը կոչուի Պէքմընականութիւն: Բարեկամ մը հարցուց Մր. Պէքմընի թէ ինքը կը հաւատայ որ «պէտք է» մարդուն «նորէն ծնանիլ»: «Անշուշտ», կը պատասխանէ ան, «ես կը հաւատամ թէ մարդ մը պէտք է ծնանի ամէն օր».: «Մարդ մը պէտք է ծնանի ԱՄԷՆ ՕՐ».: Ահա Պէքմընական - Օքսֆորտեան Շարժումին քարոզութիւնը: Ով որ գիտէ Աստուածաշունչը Խօսքը, կրնայ խաբուիլ «անկեղծ եւ բարի» երեւոյթներէն: Միթէ տակաւին կարող չենք Բ. Կոր. 14. 13-15ի լուսով ճանչնալ այս Շարժումին դրդիչը եւ անոր պաշտօնեաները:

Անոնք որ մոլորած են վերստին ծննդեան եւ Տէր Յիսուս Բրիստոսի «արեանը հաւատքով» եղած փրկութեանը մասին, հարկաւ չեն կրնար ճշմարտութիւնը ճանչցած ըլլալ մեղքի վրայով ալ: Յիսուսի ասոնք կ'ընդունին մեղքին գոյութիւնը եւ անկէ ազատման հարկաւորութիւնը, բայց կը ներկայացնեն զայն սոսկ իբր դժբաղդութիւն մը, սխալանք մը, կամ արգելք մը՝ որ կրնայ մէջտեղէն վերցուիլ՝ մեղաւորին կողմէն, զղջումով, խոստովանութիւնով եւ հրաժարումով.: Այսպիսի քարոզութիւն մը համեմատ է Հոգիին վկայութեան, որ կ'ըսէ թէ «Յիսուս» կոչեցեալը — «ԱՆԻԿԱ Իր ժողովուրդը իրենց մեղքերէն ՊԻՏԻ ՓՐԿԷ» Մատթ. 1. 24, եւ կը փրկէ «ԻՐ ԱՐԵԱՆԸ ՄԻՋՈՑՈՎ» Եփես. 1. 7:

Չէ՛, մեղքը (ինչպէս ասոնք կը ներկայացնեն) բարոյական զարտոյղութիւն մը չէ, անկախումութիւն մը, որ կրնայ շիտկուիլ մեղաւորին անկեղծ կամքովը եւ ջանքերովը. հապա է «ԱՆՕՐԷՆՈՒԹԻԻՆ», «ԱՊՍՏԱՄՐՈՒԹԻԻՆ», «ԹՇՆԱՄՈՒԹԻԻՆ» Աստուծոյ «ԴէՄ»: «Քեզի, միայն ՔԵՉԻ ԴԷՄ մեղանչեցի» ազազակեց Դաւիթ: Տես Ա. Յովհ. 3. 4, Եփես. 2. 3, 5. 6, Կոր. 1. 24: Արդարեւ իր «յանցանքներուն եւ մեղքերուն մէջ ՄԵՌԱԾ» ըլլալով, մարդ ինչպէ՞ս պիտի կրնայ ազատել ինքզինքը իր մեղքերէն: «Պէտք է ձեզի վերէն ծնանիլ» եւ «ԱՐԻՆ ԶՅԱՓՈՒԱԾ» թողութիւն չըլլար: «Տէրը Ես եմ, Ես եմ, եւ

ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ՓՐԿԻՉ ՀԿԱՅ: «Ես եմ, ես եմ որ քու յանցանքներդ Ինձի համար կը շնչեմ»: Օքսֆորտեանը չկրնար քարոզել որ «Աստուած արդար դատաւոր է, եւ Աստուած ամէն օր բարկացած է» մեղաւորին, եւ թէ Ան կ'արդարացնէ մեղաւորը իր կերպովը, Քրիստոսով յայտնած ԻՐ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆՈՎԸ, որ կ'ստացուի միայն հաւատքի միջոցով:

Վերը ըստաւաններն հասկնալէ վերջ դժուար չէ գիտնալ թէ ինչո՞ւ համար Պր. քմէնեաններ այնքան կը շեշտեն մեղքե՛ր խոստովանելու, մանաւանդ հրապարակաւ խոստովանութեան վերայ: Ասոնց ժողովները ամէն տեսակ մեղքերու խոստովանութիւններ են (կամ կը սորվեցնեն թէ ըլլալու են): Այս Շարժումին հաւատարիմ հետեւող մը այսպէս ընելու է: Ձեռք տեսներ թէ որչափ անողջամիտ հետեւանքներ կրնան յառաջ գալ, եւ արդէն ալ կուզան, ինչ որ անարգանք կը բերէ Աստուածաշունչին «ուղջամիտ վարդապետութեան», որ կ'ըսէ թէ «Մարդոցմէ գաղտնի գործուած բաները խօսելն անգամ ամօթ է»: Այսպէս ընելով անոնք կը հաւատան զօրաւոր եւ յաջող դիմադրութիւն մը ըրած ըլլալ մարդուս բնական եղող մեղսահակութեան դէմ, կարծելով թէ կը տկարացնեն անոր ոյժը եւ իշխանութիւնը իրենց սրտերուն մէջ:

Ամէն ճշմարիտ քրիստոնեայ գիտէ անշուշտ որ մեղաց խոստովանութիւնը կարեւոր եւ օգտակար պահանջ մըն է հոգեւոր սկսելու եւ սրբութեան մէջ յառաջանալու համար: Բայց ոչ այն իմաստով կամ նպատակով որով կը ներկայացնեն զայն Օքսֆորտեանները: Աստուած մեր մեղքերուն թողութիւն կուտայ եւ մեզ անոնցմէ կը սրբէ՝ ոչ որովհետեւ մենք կը խոստովանինք զանոնք, ՀԱՊԱ ՈՐՈՎՃԵՏԵՒ ԻՐ Որդին Յիսուս Քրիստոս «մեր մեղքերը Իր մարմինովը խաչափայտին վրայ վերցուց, ՈՐՊԷՍՁԻ մենք մեր մեղքերէն ազատինք եւ արդարութեան համար ապրինք»: Զօրութիւնը մեր խոստովանութեան մէջ չէ, այլ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՐԵԱՆԸ ՄԷՋ:

«Կ'ուզե՞ս ազատ ըլլալ մեղքին բեռէն,

Մեծ զօրութիւն կայ Սուրբ արեան մէջ:

Կ'ուզե՞ս յաղթող ըլլալ՝ Հարին ամէն.

Զօրութիւն կայ Սուրբ Արեան մէջ:

Իսրայէլի որդիներուն ներկայացուցիչը ըլլալով՝ Քահանայապետը կը խոստովանէր «անոնց բոլոր... մեղքերը... ՆՈՒԱՁԻՆ ԳԼԽՈՒՆ ՎՐԱՅ», եւ ԱՅՍՊԷՍ թողութիւն կ'ըլլար անոնց. այո՛ւ ապապէս, «ՆՈՒԱՁԻՆ ԳԼԽՈՒՆ ՎՐԱՅ», որ կը նը-

շանակէր «Աստուծոյ Դառը», եղող Տէր Յիսուս Քրիստոս իրաւաւ: Եթէ Անիկա Հպիտի մեռնէր Իր ժողովուրդին մեղքերուն համար, բոլոր տիեզերքի շուրերուն չափ խոստովանութեան արցունքները պիտի չկրնային քաւել մէկ մեղաւորի մը մէկ մեղքը: Ու եթէ ըսուած է, «թէ որ խոստովանինք մեղքերնիս, հաւատարիմ ու արդար է Անիկա մեր մեղքերուն թողութիւն տալու», կը հարցնեմ, «Հաւատարիմ ու արդար», ի՞նչ հիման վրայ: Մեր խոստովանութեան վերայ: Քա՛ւ լիցի. հապա Անոր Որդւոյն Յիսուս Քրիստոսի արիւնին», հիմին վրայ: Եթէ Աստուած «հաւատարիմ ու արդար է մեզի (որ մեղքերնիս կը խոստովանինք) այս անոր համար է որ Անիկա ՆԱՍ ապապէս է Իր Որդիին՝ որ մեռաւ մեր տեղը: Ան խոստացած է Որդիին ընդունիլ բոլոր «զանոնք որ Անով Իրեն կուզան, Եբր 7. 25, եւ ասոր համար «հաւատարիմ եւ արդար» է Անոր մեզի համար:

Իսկ զաւել հրապարակային խոստովանութեան, գիտենք որ Աստուծոյ Խօսքին մէջ պատուիրուած է թէ «Ձեր յանցանքները իրարու խոստովանեցէք», Յակ. 5. 16: Այս խօսքն է հիմը Օքսֆորտեաններու հրապարակային խոստովանութեան ուսուցումին, որպէս թէ «Իրարու», կը նըշանակէ ամենուն ամէն տեղ: Այս հասկցողութիւնը կամայական է եւ վտանգաւոր: Արդէն ալ բոլոր մոլորական շարժումները ապապէս յառաջ կուզան եւ կը տարածուին, անօրէն մեկնաբանութիւններու զօրութիւնով: Եթէ «զօրութեան աւելի բան», չխորհինք, եւ մեկնելի խօսքերն հասկընանք բաղդատութեան, դասաւորութեան եւ զուգահեռութեան կանոններով, Աստուածաշունչին համաշունչ եւ համախոհ իմաստներուն համեմատ, այն ատեն փրկուած կ'ըլլանք եւ ապահով մոլոր շարժումներէն: Այս ուղիղ ճամբայով Յակոբոս առաքեալին խօսքը բոլորովին ուղիղ կը հասկցուի Մատթ. 5. 23 եւ 24 համարներուն հետ, որոնք կը բացատրեն մեզի թէ ի՞նչ ըսել է «Իրարու խոստովանիլ», մեր յանցանքները. այսինքն, խոստովանիլ անոր որով դժմ գործուած է յանցանքը: Տես Մատթ. 18. 15, 21, Մարկ. 11. 25, Ղուկ. 17. 3, 4, Կող. 3. 13 Ղուկ. 19. 8: «Ձայն որ կայսրինն է՝ կայսրին տուէք, եւ զայն որ Աստուծոյն է՝ Աստուծոյ:

Սուրբ Հոգիով մեզի տրուած այս կանոնին հակառակ եղող հրապարակային խոստովանութիւններուն փաստներն ու չարիքները բազում են: Ասիկա աղէկ գիտեն մանաւանդ անոնք որ Հոգեւոր արթնութիւններու գործիչներ եղած են

Աւետարանին մէջ Տէրոջմով: Ասանկներ միշտ արգիւլած են հրապարակային անխտիր խոստովանութիւնները, եւ երբեք զղջացած չեն Տէրոջը առջեւ:

Անգամ մը Ուրֆայի մէջ, օրհնեալ արթնութեան մը օրերը, երբ շատեր իրենց մեղքերը կը խոստովանէին, տարեւոր կին մ'ալ ելաւ խոստովանութեան համար: Հազիւ մէկ երկու նախադասութիւն խօսեցաւ, վախ զգացի որ ետեւէն շատ գայթակղեցուցիչ խոստովանութիւն մը պիտի գար, եւ անմիջապէս ձեռքս երկնցնելով ըսի, «Մայրիկ, նստէ՛ նստէ՛,»: Ըսաւ որ խաղաղութիւն պիտի չգտնէ մինչեւ խոստովանի ամէն բան: Նորէն ըսի, «նստէ՛ նստէ՛,»: Դարձեալ աղաչեց եւ ես դարձեալ արգիւլեցի ու նստաւ: Ժողովէն յետոյ տունս կանչեցի զայն ուր առանձին ինծի ըրաւ խոստովանութիւնը: Հասկցայ որ Տէրը իմ միջոցովս արգիւլեց ասանկ մեղքի մը հրապարակային խոստովանութիւնը:

Աստուծոյ կանոնն է, «ամէն բան վայելչութիւնով», «ամէն բան շինութեան համար»: Զը՛ռովմէական եկեղեցւոյն վարդապետութեան համեմատ ամէն մեղք քահանային խոստովանելը այնքան սխալ եւ վտանգաւոր չէ, որքան ոեւէ Օքսֆորտեաններու կատարած հրապարակային խոստովանութիւնը:

Կարելի է աւելի բաներ աւելցնել, զգուշացնելու համար մեր սիրելի ժողովուրդները այս վտանգաւոր շարժումէն, բայց կը հաւատանք որ այսքանը բաւական պիտի ըլլայ: Մենք պէտք չունինք «նոր բաներ» լսելու: Ամէն անոնք որ կ'ուզեն ճանչնալ «փրկութեան ճամբան», կարող են գտնել իրենց տեղին վրայ, հոն՝ ուր պարզ Աւետարանը կը քարոզուի:

Վեր. Ա. Զ. ԵՂՈՅԵԱՅ,

Փէսէտինա, Քալիֆ.

ՊԱՏԱՆԵԱՅ

Եթէ Սէր ԶՈՒՆԻՍ

Եթէ սէր չունենամ, ոչինչ եմ՝ Ա. Կոր. ԺԳ. 1-3

I

Քեզի թող տրուի լեզուներ բիւր, բիւր. Շրթներդ դառնան յորդահոս աղբիւր, Ու դուն կարենաս բարբառել հեշտիւ Տիեզերքի բարդ զրոյցքը անթիւ:

Գիտեմ, պէտք չունիս զիւաց բանասարկու, Պիղծ եւ մահաշունչ լեզուին ահարկու. Բայց՝ թող տան քեզի դաշն ու հեղափոխ չըրեշտակներուն բարբառը անմահ:

Ու դեռ աւելցուր սճով ազաբուն, Հեթանոսատիպ քարերու լեզուն. Կամ ճոխ ու վըսեմ համամարդկային լեզուները նոր, լեզուները հին:

Ու թող բովանդակ բնութիւնն աղու՝ լեզուիդ իր լեզուին գաղտնիքը հեղու, Ու դուն հեշտութեամբ մ'աշխարհան վաղահաս Նոյնիսկ տարրերուն մրմունջն հասկնաս...

Բայց այս բոլորէն վերջ եթէ քեզի Առ Աստուած, առ մարդ Սէրը կը պակսի՝ Կեանքըդ ալ չունի նշանակութիւն, Աւելի քան պաղ պղնձի բամբուկ...

II

Ու թող քեզի դեռ շոայլուր նաեւ Համայնագէտի մ'ըղեղը պարզել, Ու դուն կարենաս հասկնալ բոլոր Տիեզերական գաղտնիքները խոր...

Հի'ն հի'ն դարերը բաց գրքի նման, Կարենաս էջ էջ թղթատէլ լըման, Մ'ո՛ւթ մ'ո՛ւթ ապագան՝ լոյս ներկայիդ պէս Զունենայ ոչ մէկ կնքըւած երես:

Ո՛չ մէկ հըրեշտակ, ո՛չ մէկ սատանայ, Ո՛չ իսկ արարած մ'աշխարհիս վըրայ՝ Ունենայ խորհուրդ մ'որ քեզմէ ծածուկ Մընայ առեղծուած, անլոյծ հանկուկ:

Այսպէս դառնայի՛ր դուն մեծահըռչակ Գիտուն-մարգարէ մ'ամենազուշակ, Ու թափանցելով ամէն մութ խորհուրդ՝ Մարդկային սրբտին տայի՛ր լի յագուրդ...

Բայց՝ առանց Սիրոյ, ո՛հ առանց Սիրոյ Ապրած կ'ըլլաս դուն առանց Աստուծոյ, Առանց Աստուծոյ կեանք մ'աննըպատակ՝ Կեանք չէ, այլ յաւէտ տխուր փլատակ...

III

Ու թող սրբաբիդ մէջ հըրաշագործի Հաւատքի վըսեմ պարզելն արծարծի, Ու դուն կարենաս ստեղծագործել Մեծախոս մըտքիդ պահանջքը անել...

Խ սքովըդ ընդհուպ այս պիղծ ու դժբաղդ
Երկիրը դառնար անարցունք դրախտ.
Ու դժոխատիպ ամբոխը յանկարծ
Ըլլար միաձոյլ ազգ մը լուսարծարծ...

Արցունքը մարդուն՝ փոխուէր յակիրթի,
Վէրք, կը կիծ ու սուգ երկնային խինդի,
Ո՛չ հիւանդութիւն ըլլար եւ ոչ քաղց,
Խուժանը դժխեմ դառնար սրտաբա՛ղձ:

Եւ այս ուղղութեամբ իսեալ կարգերով
Ստեղծէիր նոր աշխարհ մ'անխըռով,
Ու դուն հաւատքիդ խօսքովը հըզօր՝
Անկարելին իսկ ընէիր այսօր...

Բայց առանց Սիրոյ քու սիրտդ կիրքի
Կը մընար գեհեան մ'անմար կրակի,
Ու եղեմատիպ նոր աշխարհին մէջ՝
Ինքըդ կ'ըլլայիր դժոխքըդ անշէջ:

IV

Այս բոլորէն վերջ՝ թող միահամուռ,
Աշխարհիս զահը աղամանդակուռ,
Քեզի նուիրեն ծափով յարածուն,
Ու դուն դառնաս տէր բոլոր ազգերուն:

Ու յանկարծ եթէ տիեզերակալ
Այդ մեծութենէդ ուզես մերկանալ,
— Դուցէ փառամոլ, սէզ ու չարաբաստ
Քու մէջըդ մեծցող «ես»իդ ի նպաստ:

Սկըսիս բաշխել արծաթն ու ոսկին,
Կալուածքդ բոլոր, գանձերդ անգին,
Ծառայ ու գերի դառնան թագաւոր՝
Ու դուն ալ անոնց պարզ աշխատաւոր...

Ու դեռ եթէ ողջ մարդկութեան առջեւ,
Վառ խարոյկի մը ծոցը հրաթեւ
Նետուիս անալլայլ եւ ասպետօրէն.
Ինչպէս նետեցիր գոյքըդ համօրէն:

Այդ հերոսութիւնն իսկ քեզի համար
Պիտի նըկատուէր արարք մը յիմար,
Ձի առանց Սիրոյ դուն ոչինչին պէս՝
Նոյնիսկ գէրօ՛ւ մ'ալ պակաս կ'արժես...

ՍԱՄՈՒԷԼ Պ.

Լա Սիօթա

ՄԱՆԿԱՆՑ ՍԻՒՆԱԿ
.....

ՈՒՂԻՂ ՀԵՏՔԵՐ

Ձմեռուան օր մըն էր: Նախորդ գիշեր ձիւնը
առատութեամբ տեղացած եւ իր թաւ ու սպի-
տակ վերարկուին տակ ծածկած էր դաշտ ու
անտառ: Դպրոցը գոց էր այդ օր: Առտուն կա-
նուխ, հինգ դրացի եւ տարեկից տղաք, իրենց
պատուհաններէն ու պատշգամներէն զիրար բա-
րեւեցին ուրախութեան աղաղակներով: Անոնց
բոլորին խորհուրդը մէկ էր, մօտակայ անտառը
պիտի երթային ձիւնագնդակ խաղալու: Նախա-
ճաշէն անմիջապէս վերջ մեկնեցան, չմոռնալով
նաեւ հետերնին առնել իրենց սահնակները:

Մինչեւ կէսօր զանազան խաղերով ժամա-
նակ անցուցին, ու հիմա հանդարտ քայլերով,
իրարու հետ խօսակցելով տուն կը վերադառնա-
յին, երբ յանկարծ հասան տափարակ տեղ մը:
Ձիւնը հոն կարծես աւելի սպիտակ էր, եւ անոր
միապաղաղ փայլը ոչ մէկ քար, կամ չոր ճիւղ,
Պամ ոեւէ ուրիշ սեւ կէտ չէր խանգարեր: Տը-
ղաքը կանգ առած կը դիտէին:

Անոնցմէ մին, որուն անունը Գրիգոր էր, ը-
սաւ յանկարծ. —

— Տղաք, եկէ՛ք մեր ոտքերուն հետքով մէյ
մէկ շաւիղ գծենք այս ճերմակ տարածութեան
վրայ, նայինք որո՛ւնը ամենէն ուղիղը պիտի
ըլլայ:

— Իմս, իմս, աղաղակեցին իւրաքանչիւրը:

— Լաւ, փորձեցէ՛ք, ըսաւ Գրիգոր, ու բոլորը
միասին սկսան գործի: Ամէն մէկը կ'աշխատէր
իր մէկ ոտքը միւսին ճիշդ առջեւը դնելով գիծը
շիտակ հանել:

Երբ բացատին միւս կողմը հասան, իրենց ե-
տին նայեցան, եւ չկրցան զսպել զարմանքին:
Շաւիղներէն մէկը կոր էր, միւսը ծուռ, երկու
հատն ալ զրեթէ զիկ-զակ: Միայն Գրիգորին
շաւիղն էր ուղիղը: Երբ հարցուցին թէ ինչպէս
ըրած էր, պատասխանեց, «Ես ոտքերուս բնաւ
չնայեցայ, այլ իմ դէմս ծառ մը նշանակէտ ընտ-
րելով, աչքերս անկէ չհեռացուցի եւ ուղղակի
դէպի գայն քալեցի»:

Արդեօք այս տղաքը չե՛ն նմանիր այն մար-
դոց, որոնք անկեղծօրէն կը փափաքին իրենց
կեանքին մէջ ուղիղ հետք մը ձգել, շիտակ ճամ-
բու մը հետեւիլ, բայց իրենց ուշադրութիւնը
իրենց անձին վրայ կը կեդրոնացնեն միշտ, ի-
րենց գործերը դիտելէն չեն դադրիր: Կը կար-
ծէ՞ք թէ ասոնք պիտի յաջողին: Երբեք: Աս-

տուժոյ խօսքը կ'ըսէ, «ամէնքը խոտորեցան»: Ուղիղ հետք մը ձգելու համար միմիայն մէկ միջոց կայ — մեր աչքերը յառել մեզմէ առաջ դացող մեր Փրկչին, ու չնայիլ մեր վրայ կամ մեր շուրջը: Մէկ կերպ մը կայ, Պէտք է «Վազենք մեր առջեւը դրուած ասպարէզի ընթացքը. Յիսուսի նայինք» Եբր. ԺԲ. 1, 2: Եթէ մեր աչքերը Յիսուսէն չհեռացնենք մեր բոլոր կեանքին մէջ, այն ատեն չենք կրնար ընել այն որ Յիսուս պիտի չընէր, չենք կրնար խորհիլ այն որ Յիսուս պիտի չխորհէր, չենք կրնար խօսիլ այն որ Յիսուս պիտի չխօսէր, եւ չենք կրնար երթալ հոն ուր Յիսուս պիտի չերթար:

ԶՈՒՐ ԵՒ ԿՐԱԿ

Երեւակայեցէք շատ գեղեցիկ թէյաման մը, որ պարծանքով կարելի է դասել սենեակի մը գեղեցկագոյն զարդերուն կարգը: Բայց երբ թէյ մը չինել ուզէք, այդ թէյամանին բոլոր գեղեցկութիւնը բանի մը չծառայեր, եթէ թէյին վրայ շուր չլիցնէք եւ կրակ չգործածէք:

Դուն քրիստոնեայ ընտանիքի դաւանեալ եմ, կամ քրիստոնեայ անունը կը կրեմ: Այդ անունը բացարձակապէս ոչինչ կ'արժէ քեզի համար, եթէ քու ծարաւդ չզգաս եւ չիմես Կենաց Զուրէն, «որ յաւիտենական կեանքի համար կը բղխէ» Յովհ. Դ. 14: Եւ եթէ չլիցնուիս Ս. Հոգւոյն շերտութիւնովը, (Հոով. Ը. 11): Ուրիշ բան չի կրնար փոխել Տէր Յիսուս Քրիստոսի սա խօսքերուն նշանակութիւնը, «Եթէ մարդ մը շուրէն ու Հոգիէն չծնանի, չի կրնար Աստուծոյ թագաւորութիւնը մտնել» Յովհ. Դ. 5:

Միայն անունով «քրիստոնեայ» մը Տէրոջը համար այնքան անպէտ է, որքան տառապանքով համար՝ գեղեցիկ բայց պարապ թէյաման մը:

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ՊԻՈՍ ԺԱ. ԵՒ ՀԻԹԼԷՐ.— Այս վերնագրով տեղական թերթի մը մէջ յօդուած մը հրատարակուած էր, որմէ կը քաղենք հետեւեալը:

Հիթլերականութիւնը 60 միլիոն գերմաններու կը բերէ կեանքի եւ տիեզերքի մասին այնպիսի յղացում մը, որ բոլորովին սարքեր է 20 դարերէ ի վեր Քրիստոնէութեան աշխարհի մէջ տարածած խորհուրդէն: Մինչդեռ քրիստոնէական վարդապետութիւնը իր սկզբնաւորութեան մէջ միշտ ալ մարդկային մեծ ընտանիքին բնական

միութեան սկզբունքը դաւանած եւ շեշտած է, Հիթլերականութիւնը ազնիւ արեան խորհուրդին վրայ յենելով, ցեղի մը միւս բոլոր ցեղերուն վրայ գերակայութիւնը կը հաստատէ: Բայց եւ այնպէս Աւետարանին համաձայն, Քրիստոս բոլոր աշխարհին համար եկաւ: Աստուծոյ Որդին ցեղ, արիւն, գոյն, դասակարգ չի զանազաներ: Անոր վարդապետութիւնը տիեզերական է: Անոր համար է որ եկեղեցին կ'ընդունի թէ անհատը անբռնաբարելի իրաւունքներ ունի եւ պետութիւնը միմիայն այդ իրաւունքները պահպանողն ու անոնց ազատ գործունէութիւնը ապահովողն է: Հիթլերականութեան համար, ընդհակառակը, պետութիւնը բացարձակ նպատակն է եւ անհատը իր մէջ կը լուծէ: Այսպէս, բազմաթիւ կէտերու մէջ, ազգայնական ընկերվարութիւնը քրիստոնէութեան հակապատկերն է: Բայց մին թէ միւսը կը ձգտին մինչեւ հոգին թափանցել: Ուրեմն անոնք իրարու դէմ են: Զիրար կը վանեն: Եւ եթէ Հիթլերականութիւնը յաղթանակէ, ատիկա քրիստոնէական քաղաքակրթութեան կործանումը կը նշանակէ:

Հասկնալի է որ այս պարագաներուն մէջ ծայր աստիճան կարեւորութիւն կը ստանան այն խորհրդակցութիւնները որ շուտով պիտի սկսուին Գերմանիոյ եւ Վատիկանի միջեւ, անցեալ աշունէն ի վեր զանոնք իրարու կապող դաշինքին շուրջ:

Վիճաբանութեան նիւթ չեն կրնար ըլլալ այն կէտերը ուր եկեղեցւոյ վարդապետութիւնը խնդրոյ առաւելայ է, սրուած ըլլալով Վատիկանի հակառակութիւնը գերման նոր սկզբունքներուն: Վատիկանի եւ Գերման կառավարութեան միջեւ տեղի ունենալիք խորհրդակցութիւնները ամբողջ Գերմանիոյ մէջ դանդաղ կաթոլիկ երիտասարդաց միութիւններու մասին են, զոր Հիթլերականները իրենց կազմակերպութիւններուն մէջ ձուլել կ'ուզեն: Հիթլերականութիւն եւ եկեղեցի կը մըցին փոխադարձաբար զրաւելու գերման երիտասարդութեան սիրտը, սէրը եւ քուէն: Ով որ երիտասարդութիւնն ունի, ապագան ունի: Ահա թէ ինչու պայքարին ելքը Գերմանիոյ ապագայ ճակատագրին համար մեծագոյն կարեւորութիւնն ունի:

Le Gérant : Mr. le PASTEUR KALTENBACH

Imp. Y. ARMEN & Cie, 39 Rue St - Savournin Marseille

ՀԱՅ ԱԿԵՏ. ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐ ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՋ

(Շարածաւիջի աղօթածողողներու մասին հարցնել տեղոյն վրայ):

Ս ԱՐՄԷՅԷ—Հովիւ' (Վեր.) Յ. Ն. Ղազարոսեան
7 Rue Papère.

Կիր. ժամը 8. 15 ին կիրակնօրեայ դաս,
11, Rue de l'Eclipse.

13 ին քարոզածողող,
13 Rue Delille.

15 ին աղօթածողող,
11, Rue de l'Eclipse.

9. 30ին կիրակնօրեայ դպրոց մանկանց 11 Rue d'ede l'Eclipse
Շարածաւիջի ժողովներ Սէն Լուի, Կարտանի,
Սէն Ժիւլիէնի, Սէն Սեբաստիանի, Սէն Մարկրի-
թի, Սէն Ժէրոմի Պուլվար Օուոի մէջ):

Սէն Լուի.—Քարոզիչ Պրն. Վաֆան Սահակեան,
28, Bd. Grands Pins, St. Loup

Կիր. ժամը 8ին մանկանց կիր. դաս:

9. 30ին Ս. գրական ուսումնա.,
16 ին քարոզածողող:

ՍԷՆԹ ՄԱՐԿՐԻԹ.—

Կիր. ժամը 16ին աղօթածողող:

ԼԱ ՍԻՅԹԱ.— Քարոզիչ' Պրն. Ս. Պազգալեան,
24 Rue Fougasse

Կիր. ժամը 9. 30 ին աղօթածողող
Ֆրանս. եկեղեցիին մէջ
15 ին քարոզածողող,

Մանկանց կիրակնօրեայ դաս նոյն տեղը:

ԲՕՆՏ ՕՊԷՆԱՍ—Հովիւ' Պատ. Ա. Փափազեան
Pont.d'Aubenas, (Ardèche)

Կիր. ժամը 8. 30 մանկանց կիրակ. դաս
10. 15 քարոզածողող
18. 30 աղօթածողող

ՍԷՆ ՓԻԷԹ.—

Կիր. ժամը 10ին մանկանց կիր. դպրոց:
16. 30 ին քարոզածողող եւ
աղօթածողող

ՄՕՆԹԷԼԻՄԱՐ.—

Կիր. ժամը 13ին մանկանց կիր. դպրոց:
14ին քարոզ եւ աղօթածողող:

ՎԱԼԱՆՍ.— Հովիւ' Բրոֆ. Գ. Գ. Խալիկեան
55 Ave. Jean Jaurès Bourg les Valence
(Drôme)

Կիր. ժամը 13ին քարոզածողող Ֆրանս.
եկեղեցիին մէջ:

ՌՕՄԱՆ.—

Կիր. քարոզածողող:

ԼԻՕՆ— Հովիւ' Պատ. Ժ. Պարսումեան,
18, Rue du Dr. Rebatel

Կիր. ժամը 9. 45ին քարոզածողող,
5 Cours Lafayette, 8 Passage Poste.

15ին աղօթածողող նոյն տեղը:

15 ին երիտասարդութիւններու
ժողով (15 օրը անգամ մը):
18 Rue du Dr. Rebatel.

ՏԷՍԻՆ.—

Կիր. ժամը 13. 45ին քարոզածողող,
15ին աղօթածողող: Rue Wilson.

ՍԷՆ ՄՕՐԻՍ

Կիր. ժամը 10ին քարոզ եւ աղօթածողող:

ՎԻԷՆ.—

Կիր. ժամը 15ին քարոզածողող
Rue Lafayette.

ՓՕՆ ՏԸ ՇԷՐԻԻ.—

Կիր. քարոզածողող եւ աղօթածողող
(15 օրը անգամ մը):

ՍԷՆԹ ԷԹԻԷՆ.—Քարոզիչ Պրն. Ի. Աբրահամեան
2. Place de la Pareille.

Կիր ժամը 10. 30ին քարոզածողող
51 Rue de la République.
17ին աղօթածողող

Արմէ տի. Սալիւի սրահին մէջ

ՍԷՆ ՇԱՄՕՆ.—

Կիր. ժամը 14ին քարոզածողող
Mairieի մէջ, Justice de la Paix սրահը.

ԲԱՐԻՉ— Հովիւ' Պատ. Զ. Բ. Պոտաքեան,
10 bis Villa de la Gare, Vanves (Seine).

Կիր. ժամը 10 15ին քարոզածողող
135 Bd. de Sebastopol Paris 2^e
Metro Réaumur - St. Denis

Կիր. ժամը 15. 30ին
37 Rue Tournefort Paris 5^e
Metro Mouhe Aut. K6

Ամսոյն Ա. կիրակիները երիտասարդա-
Քրիստոնէական Միութիւն

բանախօսութիւնք եւ ուսումնասիրութիւնք:

Ամսոյն Գ. կիրակիները երիտասար-

դութեաց Քրիստոնէական Միութիւն

բանախօսութիւնք եւ ուսումնասիրութիւնք:

Ամսոյն Բ. եւ Գ. կիրակիները Սր. Գրոց
մեկնութիւն եւ դասաւանդութիւն բոլորին համար

Կիր. ժամը 20. 30ին աղօթածողող
59 Ave. du Bas Meudon Ile St Germain
Issy les Moulinaux.

ԱԼՖՕՐՎԻԼ.— Հովիւ' Վեր. Մ. Տէր Սահակեան,
16 Bd. Carnot, Alfortville

Կիր. ժամը 15. 30ին պաշտամունք
Rue des Brochets, Alfortville

Ժամը 4ին Կիր. դաս

ԵՐԳ ՄԸ ՁԱՅՆԱԳՐՈՒԱԾ

«ԲԱՆՔԵՐ»Ի ԱՄԷՆ ՄԷԿ ԹԻԻԻՆ ՄԷՋ

«Բանքեր»ի 1933 տարուան վերջին թիւին մէջ գրեցինք թէ կը փափաքէինք յառաջիկայ տարին Յունվարի թիւէն սկսեալ (եթէ կարելի ըլլայ)ամէն մէկթիւի մէջ մէյսէկ ձայնագրեալ հոգեւոր երգ լինել մանկանց սիւնակին տակ:

Գրեցինք նաեւ թէ «Բանքեր» չունի նօթայի թիփեր, բայց կրնայ 1300 ֆրանքի գումարով մը այդ անհրաժեշտ պէտքը լեցնել:

Բանի որ այդ գումարը մինչեւ այսօր եկած չէ, «Բանքեր»ի այս թիւը առանց երգի լոյս կը տեսնէ: Այսուամենայնիւ բարոյապէս ու նաեւ նիւթապէս քաջալերող նամակներ ընդունած ենք, մեր քով գտնուած գումարը 350 ֆրանքի կը հասնի: Կ'ակնկալենք որ 1300 ֆրանքը շուտով գտնուի եւ մանկանց համար մեր ունեցած փափաքը իրականանայ:

Ա՛րդ, եթէ անհատներ՝ կամ եկեղեցիներ նաեւ Կ/ր. դպրոցներ համախմբուելով շուտով լեցնէին այս գումարը, մենք եւս նոյնքան շուտ պիտի կարենայինք հրատարակել երգերը:

Ուստի Բանքերի այս առաջին թիւը առնելուդ, սիրելի ընթերցող, հաճէ մտածել թէ այս մասին պարտականութիւն մը կ'զգա՞ս. եթէ այո, հաճէ չուշացնել:

Ընդունէ մեր սրտագին շնորհակալութիւնները սիրելի մանուկներու կողմէն
ԽՄԲ. ԲԱՆՔԵՐ»Ի

ՄՏԱՅԱՆՔ

ՂԵԼՈՆՂ ԱՐՔ. ԴՈՒՐԵԱՆ, իր կեանքն ու գործը
ՏԱԳԵՐՈՒԹԻՒՆ ՍԱԿԱԿ ՄԵՍՐՈՒՄ, ԳԱՅԻՐԷ 25 ՇԱՐԱ ԹԵՎ.
ՓԻՔ: ԿԱՊՈՒՅ Գ. Պ. ԳԱԼԷՄԵԱՐԵԱՆ, ՎԻՆ 10 ԵՎԱ. ՂԵԿ.

ՄԱՆԿԱՆԵՐ ԴԱՌՈՒԽԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ՏԱՆՈՒ ՄԷՋ
ՆՈՅՆ ՏԱՊԱՐԱՆԷՆ ԵԼԱԾ, ՏԵՂԻՆԱԿ Լ. Պ. ԳԱԼԷՄԵԱՐԵԱՆ
ՎԻՆ 5 ԵՎԱ. ՂԵԿ. ՇԱԿԵԿԱՆ ՎԻՐՔ ՄԸ ԾՆՈՂԱԵՐ ԿԱՄԱՐ: